



EUROPEAN COURT OF HUMAN RIGHTS
COUR EUROPÉENNE DES DROITS DE L'HOMME

ՄԵԾ ՊԱԼԱՏ

ՉԻՐԱԳՈՎԱԸ ԵՎ ԱՅԼՔ ԸՆԴԴԵՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ

(Գանգաղ թիվ 13216/05)

ՎՃԻՌ

(Արդարացի փոխհատուցում)

ԱՏՐԱՍԲՈՒՐԳ

12 դեկտեմբերի 2017թ.

*Սույն վճիռը վերջնական է, սակայն կարող է ենթարկվել խմբագրական
փոփոխությունների:*

Չիրագովը եւ այլք ընդդեմ Հայաստանի գործով,

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, հանդես գալով Մեծ պալատի հետեւյալ կազմով՝

Գուլիդո Ռայմոնդի [Guido Raimondi]՝ *Նախագահ,*

Անգելիկա Նուսբերգեր [Angelika Nußberger],

Լինոս-Ալեքսանդր Սիցիլիանոս [Linos-Alexandre Sicilianos],

Գաննա Յուդկիվսկա [Ganna Yudkivska],

Ռոբերտ Սպանո [Robert Spano],

Լուիս Լոպես Գեռռա [Luis López Guerra],

Նեբոյշա Վուչինիչ [Nebojša Vučinić],

Պոլ Լեմմենս [Paul Lemmens],

Քրշիշթոֆ Վոյտիչեկ [Krzysztof Wojtyczek],

Քսենյա Տուրկովիչ [Ksenija Turković],

Էգիդիյուս Կյուրիս [Egidijus Kūris],

Յուլյա Մոտոկ [Iulia Motoc],

Բրանկո Լուբարդա [Branko Lubarda],

Մարտինս Միտս [Mārtiņš Mits],

Արմեն Հարությունյան [Armen Harutyunyan],

Լետիֆ Հուսեյնով [Lətif Hüseynov],

Յոլիեն Շուկինգ [Jolien Schukking]՝ *դատավորներ,*

եւ Յոհան Բոլուերթ [Johan Callewaert]՝ *Մեծ պալատի քարտուղարի տեղակալ,*

2017 թվականի սեպտեմբերի 28-ին անցկացնելով դռնփակ խորհրդակցություն,

կայացրեց հետևյալ վճիռը, որն ընդունվեց նույն օրը.

ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

1. Սույն գործը հարուցվել է «Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիայի (Կոնվենցիա) 34-րդ հոդվածի համաձայն Ադրբեջանի վեց քաղաքացիների՝ պրն Էլխան Չիրագովի, պրն Ադիշիրին Չիրագովի, պրն Ռամիզ Ջեբրայիլովի, պրն Ակիֆ Հասանովի, պրն Ֆեխրեդին Փաշաեի եւ պրն Քառացա Ջաբրայիլովի (դիմումատուներ) կողմից ընդդեմ Հայաստանի Հանրապետության՝ 2005 թվականի ապրիլի 6-ին Դատարան ներկայացված գանգատի (թիվ 13216/05) հիման վրա: Վեցերորդ դիմումատուն մահացել է 2005 թվականի հունիսին: Գանգատով վարույթն իր անունից շարունակել է իր որդին՝ պրն Սադաթել Ջաբրայիլովը:

2. 2015 թվականի հունիսի 16-ին կայացրած վճռով (հիմնական վճիռ) Դատարանը որոշել է, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի 8-րդ եւ 13-րդ հոդվածների, ինչպես նաեւ Կոնվենցիային կից թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի շարունակական խախտում, եւ որ 14-րդ հոդվածի մասով քննության ենթակա առանձին հարց չի ծագել: Մասնավորապես, Կոնվենցիայի թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի առնչությամբ Դատարանը հանգել է այն եզրակացության, որ ինչ վերաբերում է ուսումնասիրվող՝ 2002 թվականի ապրիլի 26-ից հետո ընկած ժամանակահատվածին, ապա որեւէ նպատակ չի նշվել, որով կարող էր արդարացվել դիմումատուներին իրենց գույքից օգտվելու հնարավորությունից զրկելը եւ այդ միջամտության դիմաց որեւէ հատուցում չտրամադրելը: Դատարանը գտել է, որ Հայաստանի Հանրապետությունը պատասխանատու է դիմումատուների իրավունքների խախտման համար (*Չիրագովը եւ այլք ընդդեմ Հայաստանի [ՄՊ] [Chiragov and Others v. Armenia [GC]]*, թիվ 13216/05, § 201, ՄԻԵԴ 2015):

3. Կոնվենցիայի 41-րդ հոդվածին համապատասխան՝ դիմումատուներն իրենց կրած վնասի, ինչպես նաև ծախսերի եւ ծախքերի դիմաց պահանջել են արդարացի փոխհատուցում՝ մի քանի միլիոն եվրոյի չափով:

4. Քանի որ Կոնվենցիայի 41-րդ հոդվածի կիրառման հարցը պատրաստ չի եղել դրա վերաբերյալ որոշում կայացվելու համար, Դատարանը հետաձգել է այն եւ Կառավարությանն ու դիմումատուներին առաջարկել է տասներկու ամսվա ընթացքում ներկայացնել այդ հարցի վերաբերյալ իրենց գրավոր դիտարկումները, եւ մասնավորապես, Դատարանին ծանուցել իրենց կողմից ձեռք բերված ցանկացած համաձայնության մասին (հիմնական վճռի § 222 եւ եզրափակիչ դրույթների 8-րդ կետ):

5. Համաձայնության չգալով՝ դիմումատուներն իրենց դիտարկումները ներկայացրել են 2016 թվականի հունիսի 16-ին եւ դեկտեմբերի 28-ին, իսկ Կառավարությունը՝ 2016 թվականի սեպտեմբերի 16-ին եւ դեկտեմբերի 30-ին:

6. Մեծ պալատի կազմը որոշվել է Կոնվենցիայի 26-րդ հոդվածի 4-րդ եւ 5-րդ կետերի դրույթների եւ Դատարանի կանոնակարգի 24-րդ կանոնի համաձայն:

7. Կառավարության պահանջին ի պատասխան՝ Դատարանը որոշում է, որ արդարացի փոխհատուցման հարցի քննության համար փաստահավաք առաքելության կազմակերպում չի պահանջվում:

ԻՐԱՎՈՒՆՔԸ

8. Կոնվենցիայի 41-րդ հոդվածի համաձայն՝

«Եթե Դատարանը գտնում է, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի կամ դրան կից Արձանագրությունների խախտում, իսկ համապատասխան Բարձր պայմանավորվող կողմի ներպետական իրավունքն ընձեռում է միայն մասնակի հատուցման հնարավորություն, ապա Դատարանը որոշում է, անհրաժեշտության դեպքում, տուժած կողմին արդարացի փոխհատուցում տրամադրել:»:

Ա. Նախնական քննության հարցերը

9. Կառավարությունը պնդել է, որ դիմումատուներին չի հաջողվել ապացուցել, որ իրենք գույքի նկատմամբ իրավունքներ են ունեցել: Նրանք հայտնել են, որ դիմումատուները որեւէ բացատրություն չեն տվել գործով ներկայացված տեխնիկական անձնագրերի ծագման, ծագման աղբյուրի կամ իրավական նշանակության վերաբերյալ, եւ, հետեւաբար, այդ փաստաթղթերը չէին կարող օգտագործվել որպես ապացույց: Բացի այդ՝ հողի նկատմամբ որեւէ մասնավոր իրավունք չի ճանաչվել այն օրենքով, որը գործել է 1992 թվականի մայիսին, երբ դիմումատուները հեռացել են Լաչինի շրջանից, եւ այդ իրավունքը տասը տարի անց ստանալու որեւէ օրինական ակնկալիք չէր կարող լինել: Ավելին, հավանաբար որեւէ պատճառահետեւանքային կապ չի եղել գույքից օգտվելու հնարավորությունից ենթադրաբար զրկելու եւ պատասխանող Կառավարությանը վերագրվող գործողությունների միջեւ: Վերջապես, Կառավարությունը պնդել է, որ փաստաթղթերի եւ փոխհատուցման հետ կապված խնդիրները, ի թիվս այլ հարցերի, մինչեւ գործը Դատարան բերելը կարող էին եւ պետք է ենթակա լինեին ներպետական մակարդակով դատական քննության:

10. Դիմումատուն վիճարկել է Կառավարության առարկությունները՝ նշելով, որ հիմնական վճռում այս հարցերի վերաբերյալ Դատարանի կողմից արդեն որոշում է կայացվել:

11. Դատարանը կրկին նշում է, որ հիմնական վճռում այն հանգել է այն եզրակացության, որ դիմումատուների տեխնիկական անձնագրերը պարունակել են գույքի նկատմամբ իրավունքի *prima facie* (առերեսույթ) ապացույցներ, եւ, հաշվի առնելով ներկայացված բոլոր ապացույցները՝ որպես մեկ ամբողջական միավոր, դիմումատուները բավարար չափով հիմնավորել են իրենց պնդումներն առ այն, որ Լաչինի շրջանից հեռանալիս նրանք ունեցել են բնակելի տներ եւ հող (§ 143): Հողի եւ բնակելի տների նկատմամբ իրենց իրավունքները Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի իմաստով համարվել են «գույք» եւ հետագայում՝ Հայաստանի կողմից Կոնվենցիան վավերացնելուց առաջ կամ հետո, օրինական

հիմունքներով կամ այլ կերպ չեղյալ չեն ճանաչվել (§ 149): Նրանց հողերը եւ բնակելի տները նույնպես համարվել են «տներ»՝ Կոնվենցիայի 8-րդ հոդվածի իմաստով (§ 150): Ինչ վերաբերում է դիմումատուներին իրենց գույքից օգտվելու հնարավորությունից զրկելու եւ պատասխանող Կառավարության գործողությունների միջեւ պատճառահետեւանքային կապին, ապա Դատարանը գտել է, որ 2002 թվականի ապրիլի 26-ից ի վեր՝ Հայաստանի Հանրապետությունը պատասխանատու է եղել դիմումատուների՝ Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածով (§ 201) եւ Կոնվենցիայի 8-րդ հոդվածով նախատեսված իրավունքների խախտման համար (§§ 207-208): Ավելին, այնքանով, որքանով Կառավարությունը պնդել է, որ դիմումատուները չեն սպառել արդարացի փոխհատուցման իրենց պահանջի հետ կապված իրավական պաշտպանության ներպետական միջոցները, Դատարանը նշում է, որ այն մերժել է այդ առարկությունը հիմնական վճռում, որտեղ համարել է, որ Կառավարությանը չի հաջողվել ցույց տալ դիմումատուների համար իրավական պաշտպանության այնպիսի միջոցի հասանելիությունը, որը կստեղծեր Կոնվենցիայի մասով նրանց բողոքների հետ կապված փոխհատուցում ստանալու հնարավորություն եւ հաջողության հասնելու ողջամիտ հեռանկար (§ 120): Նույն պատճառներով, Դատարանը գտել է, որ Հայաստանի Հանրապետությունը պատասխանատու է դիմումատուների՝ Կոնվենցիայի 13-րդ հոդվածով նախատեսված իրավական պաշտպանության արդյունավետ միջոցից օգտվելու իրավունքի խախտման համար (§§ 214-215):

Հետեւաբար, Կառավարության կողմից բարձրացված հարցերը վերանայման ենթակա չեն (*res judicata*) եւ սույն վճռում կրկին չեն դիտարկվելու: Հետեւաբար, Կառավարության առարկությունները մերժվում են:

Բ. Վնասը

1. Դիմումատուների փաստարկները

12. Դիմումատուները պահանջել են 2002 թվականի ապրիլի 26-ից՝ Հայաստանի Հանրապետության կողմից Կոնվենցիան վավերացնելուց հետո, մինչև այսօր նրանց կրած նյութական և ոչ նյութական վնասի դիմաց փոխհատուցում: Նրանք նշել են, որ թեև իրենք շատ են կարոտում Լաչինի շրջանում գտնվող իրենց հայրենի հողը, սակայն ընթացող հակամարտության և անվտանգության բացակայության պատճառով չեն կարող վերադառնալ այնտեղ:

13. Ինչ վերաբերում է ոչ նյութական վնասին, ապա դիմումատուներից յուրաքանչյուրը պահանջել է 50 000 եվրո՝ Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի և Կոնվենցիայի 8-րդ ու 13-րդ հոդվածների շարունակական խախտման հետևանքով իրենց պատճառված հոգեկան ապրումների և տառապանքի դիմաց: Նրանք նշել են, որ իրենց ապրումների պատճառը ինչպես 1992 թվականին տեղի ունեցած հարձակումն է, այնպես էլ իրենց ապրուստը կորցնելու վերաբերյալ անընդհատ մտահոգությունը, որպես ներքին տեղահանման ենթարկված անձինք իրենց վատ կենսապայմանները և իրենց ընտանիքների համար բարենպաստ պայմաններ ապահովելու անկարողությունը:

14. Ինչ վերաբերում է նյութական վնասին, ապա դիմումատուները 2016 թվականի հունիսին ներկայացրել են փոխհատուցման անհատական պահանջներ, որոնք ներառել են հողի և բնակելի տների արժեքի կամ դրանց վարձակալության դիմաց ստացվելիք եկամտի կորստի, գորգերի և այլ կենցաղային իրերի, ավտոմեքենաների, պտղատու ծառերի ու թփերի, ինչպես նաև անասունների արժեքի, գյուղատնտեսությունից և անասնապահությունից, այլ ձեռնարկատիրական գործունեությունից և աշխատանքից ստացվելիք եկամտի կորստի, ինչպես նաև Բաքվում բնակության համար այլընտրանքային վայրի և ապրուստի հետ կապված այլ ծախսերի դիմաց հատուցման պահանջներ:

15. Զրկվելով իրենց գույքի հասանելիությունից և, հետեւաբար, այն օգտագործելու և դրանից օգտվելու հնարավորությունից՝ դիմումատուներն

անդրադարձել են շարունակական խախտումների դեպքում Դատարանի այն մոտեցմանը, որն ուղղված էր որպես գույքի շուկայական արժեքի նկատմամբ տոկոս հաշվարկվող այն տարեկան հողային ռենտայի կորստի գնահատմանը, որը համապատասխան ժամանակահատվածում կարող էր ստացվել գույքի միջոցով (Տե՛ս *Loizidou v. Turkey* [*Loizidou v. Turkey*] (Հոդված 50), 1998 թվականի հուլիսի 28, § 33, *Վճիռների եւ որոշումների մասին զեկույցներ* 1998-IV): Այնուամենայնիվ, իրականում դիմումատուները բացառության կարգով կամ լրացուցիչ պահանջել են փոխհատուցում՝ իրենց հողի եւ բնակելի տների ներկայիս շուկայական ամբողջ արժեքի չափով:

16. Դիմումատուները, որպես իրենց սեփականության ապացույց, ներկայացրել են 1985-ից մինչեւ 1990 թվականներն ընկած ժամանակահատվածում տրված՝ իրենց հողն ու բնակելի տները նկարագրող տեխնիկական անձնագրեր: Պրն Քառացա Ջաբրայիլովը նույնպես ներկայացրել է հողերի հատկացման մասին 1974 թվականի որոշում: Ավելին, նրանք ներկայացրել են ընտանիքի անդամների, ընկերների, հարեանների եւ գործընկերների հայտարարությունները: Ի հաստատումն հողի եւ բնակելի տների վերաբերյալ իրենց պնդման՝ նրանք ներկայացրել են «Հայաստանի զինված ուժերի կողմից Ադրբեջանի Հանրապետության տարածքների գրավման հետեանքով ունեցած կորուստների եւ զոհերի գնահատման աշխատանքային խմբի» կողմից 2016 թվականի հունիսի 6-ին Բաքվում կատարված գնահատման արդյունքները: Դատարանը չի հիմնվել նրանց գույքի եւ դրա արժեքի վերաբերյալ որեւէ այլ փաստաթղթային ապացույցի վրա:

17. Ինչ վերաբերում է իրենց բնակելի տների վիճակին, ապա դիմումատուները արդարացի փոխհատուցման վերաբերյալ 2012 թվականի հուլիսի 9-ի իրենց դիտարկումներում եւ նույն հարցի վերաբերյալ 2016 թվականի հունիսի 16-ի իրենց դիտարկումներում նշել են, որ 1992 թվականին տեղի ունեցած ռազմական հարձակման հետեանքով իրենց գույքն այրվել է կամ էականորեն վնասվել: Այնուամենայնիվ, 2012 թվականի փաստարկներին կցվել են

2012 թվականի ապրիլին «Գուգլի» միջոցով ձեռք բերված՝ Լաչին քաղաքի, ինչպես նաև Չիրաղլի եւ Աղբուլաղ գյուղերի օդալուսանկարները՝ դիմումատուների ենթադրյալ բնակելի տների կամ դրանց մնացած կառույցների նշումներով: Կառավարության՝ արդարացի փոխհատուցման վերաբերյալ փաստարկներին 2016 թվականի դեկտեմբերի 28-ի իրենց պատասխանում դիմումատուներն անդրադարձել են «Գուգլի» լուսանկարներին եւ հայտնել, որ իրենց բնակելի տները դեռ կանգուն են՝ չնայած այն հանգամանքին, որ դրանք կարող են լինել լքված կամ այլ անձանց կողմից գրավված: Գործի ըստ էության քննության վերաբերյալ իրենց դիտարկումներում դիմումատուները ներկայացրել են նաև 2010 թվականի ապրիլին Ադրբեջանի պաշտպանության նախարարության կողմից ստացված՝ Լաչինի, Չիրաղլի եւ Աղբուլաղի, ինչպես նաև Կամալի գյուղի որոշ արբանյակային պատկերներ:

18. Նյութական վնասի հատուցման անհատական պահանջները հետեւյալն են.

ա) Էլխան Չիրագով

19. 1950 թվականին ծնված պրն Էլխան Չիրագովը, որն ամուսնացած է եւ ունի չորս երեխա, Չիրաղլիում ուսուցչի երկու աշխատանք է ունեցել: 2005 թվականի ապրիլին Դատարան ներկայացված իր գանգատում նա հայտարարել է, որ իրեն տեղահանելուց հետո նա ստացել է ուսուցչի իր աշխատավարձը եւ պետության կողմից վճարվող ամսական 25 000 մանաթ հավելավճար (ենթադրաբար, ադրբեջանական «հին» մանաթ. մոտավորապես 5 ԱՄՆ դոլարին համարժեք գումար՝ ընտանիքի յուրաքանչյուր անդամի համար, ինչպես նաև սննդի, վրանների եւ տաք հագուստի տեսքով որոշակի օգնություն: Նա ներկայացրել է նաև իր աշխատանքային գրքույկի պատճենը, որտեղ նշված էր, որ 1993 թվականի սեպտեմբերի 1-ին նա որպես ուսուցիչ աշխատանքի է ընդունվել Բաքվի դպրոցում: 2016 թվականի հունիսին նա նշել է, որ չի կարող Բաքվում որպես ուսուցիչ աշխատել, քանի որ այն դպրոցը, որտեղ նա աշխատանք է գտել, հեռու է եւ առողջական խնդիրների պատճառով նա չի կարող այդքան հեռու գնալ:

20. Նյութական վնասի հատուցման իր պահանջում պրն Չիրագովը հայտնել է, որ իր տեխնիկական անձնագրում նշված հողակտորի չափսն իրականում եղել է 6 500 քառ. մետր, սակայն ընդլայնումներից հետո միայն 1200 քառ. մետրն է գրանցված եղել: Այդուհանդերձ, իր պահանջում նշված արժեքը վերաբերել է միայն 1200 քառ. մետր տարածքին: Բացի այդ՝ նա ունեցել է 10 000 քառ. մետր մակերեսով երկրորդ հողակտորը, որի համար նա պահանջել է վարձակալության դիմաց ստացվելիք եկամտի գնահատված կորստի հատուցում: Բացի տեխնիկական անձնագրում նկարագրված երկհարկանի բնակելի տնից եւ պահեստից՝ նա ունեցել է նաեւ գոմ եւ երկրորդ պահեստ: Նա պահանջել է շինությունների ամբողջ արժեքի դիմաց փոխհատուցում: Նա պահանջել է նաեւ 1992 թվականին իր ընտանիքի թողած կենցաղային իրերի, այդ թվում՝ հինգ ձեռագործ գորգի ամբողջ արժեքի դիմաց փոխհատուցում: Պրն Չիրագովը եւ նրա ընտանիքի անդամները մշակել են հողը, ինչպես նաեւ պահել են մեղուներ ու անասուններ. 1992 թվականին նրանք ունեցել են 70 պտղատու ծառ, 55 մեղվի փեթակ, 3 ձի, 9 կով, 80 ոչխար, 120 հավ, 60 հնդկահավ եւ 40 սագ: Նա պահանջել է ծառերի, ձիերի եւ թռչունների ամբողջ արժեքի, ինչպես նաեւ մրգի, կարտոֆիլի, մեղրի, հորթերի, կաթի, գառների եւ բրդի վաճառքից ստացվելիք եկամտի կորստի դիմաց փոխհատուցում: Նա ցանկացել է ստանալ նաեւ ուսուցչի իր աշխատանքների կորցված աշխատավարձի եւ Բաքվում իր ընտանիքի ապրուստի հետ կապված ծախսերի փոխհատուցում:

21. 14 տարվա ընթացքում՝ 2002 թվականի ապրիլից մինչեւ 2016 թվականի հունիսն ընկած ժամանակահատվածում հասցված նյութական վնասի դիմաց պրն Չիրագովն ընդհանուր պահանջել է 1 573 180 ադրբեջանական «նոր» մանաթ (մոտավորապես 790 000 եվրո)՝ յուրաքանչյուր կատեգորիայի համար հետեւյալ գումարի չափով՝ հող (արժեքը եւ վարձակալության դիմաց ստացվելիք եկամուտը)՝ 100 000, բնակելի տներ (արժեքը)՝ 260 000, կենցաղային իրեր (արժեքը)՝ 71 480, գյուղատնտեսություն եւ անասնապահություն (վաճառքից ստացվելիք եկամուտը, ինչպես նաեւ պտղատու ծառերի եւ անասունների արժեքը)՝ 906 500, ուսուցչի աշխատավարձ՝ 100 800, ապրուստի հետ կապված ծախսեր՝ 134 400:

բ) Ադիշիրին Չիրագով

22. 1947 թվականին ծնված պրն Ադիշիրին Չիրագովը, որն ամուսնացած է եւ ունի երեք երեխա, Չիրադլիում աշխատել է որպես ուսուցիչ: Դատարան ներկայացված գանգատի համաձայն՝ նա առաջին դիմումատուի պես ստացել է պետական աջակցություն, այն է՝ աշխատավարձ, պետության կողմից վճարվող հավելավճար եւ որոշակի նյութական օգնություն: 2016 թվականի հունիսին նա նշել է, որ իր ամբողջ ընտանիքի աշխատանքի եւ կենսաթոշակի ամսական ընդհանուր գումարը կազմել է 700 ադրբեջանական մանաթ:

23. Նյութական վնասի հատուցման իր պահանջում պրն Չիրագովը պնդել է, որ իր տեխնիկական անձնագրում նշված հողակտորի չափսն իրականում եղել է 7 500 քառ. մետր, սակայն ընդլայնումներից հետո միայն 1 200 քառ. մետրն է գրանցված եղել: Իր պահանջում նշված արժեքը վերաբերել է ամբողջ փաստացի տարածքին: Բացի այդ՝ նա ունեցել է 12 000 քառ. մետր մակերեսով երկրորդ հողակտորը, որի համար նա պահանջել է վարձակալության դիմաց ստացվելիք եկամտի գնահատված կորստի հատուցում: Ինչպես նկարագրված է տեխնիկական անձնագրում, նա ունեցել է պահեստային տարածքով երկհարկանի տուն եւ առանձին պահեստ: Այնուամենայնիվ, նա նշել է, որ վերջինիս չափսը կազմել է ոչ թե 90 քառ. մետր, ինչպես նշված է անձնագրում, այլ 120 քառ. մետր: Նա պահանջել է շինությունների ամբողջ արժեքի դիմաց փոխհատուցում: Նա պահանջել է նաեւ 1992 թվականին իր ընտանիքի թողած կենցաղային իրերի, այդ թվում՝ վեց ձեռագործ գորգի ամբողջ արժեքի, ինչպես նաեւ օգտագործված «Նիվա» մակնիշի ավտոմեքենայի արժեքի չափով փոխհատուցում: Պրն Չիրագովը եւ նրա ընտանիքի անդամները մշակել են հողը, ինչպես նաեւ պահել են մեղուներ ու անասուններ. 1992 թվականին նրանք ունեցել են 90 պտղատու ծառ, 20 մեղվի փեթակ, 9 կով, 2 եզ, 65 ոչխար, 150 հավ, 70 հնդկահավ եւ 50 սագ: Նա պահանջել է ծառերի եւ թռչունների ամբողջ արժեքի, ինչպես նաեւ մրգի, կարտոֆիլի, մեղրի, մեղուների, հորթերի, կաթի, գառների, բրդի եւ պանրի վաճառքից ստացվելիք եկամտի կորստի դիմաց

փոխհատուցում: Նա ցանկացել է ստանալ նաև ուսուցչի իր աշխատանքի կորցված աշխատավարձի եւ 1992-1994 թվականներն ընկած ժամանակահատվածում Բաքվում բնակարան վարձակալելու հետ կապված ընտանիքի կրած ծախսերի փոխհատուցում:

24. Նյութական վնասի դիմաց պրն Չիրագովն ընդհանուր պահանջել է 926 240 ադրբեջանական մանաթ (մոտավորապես 465 000 եվրո)՝ յուրաքանչյուր կատեգորիայի համար հետեւյալ գումարի չափով՝ հող (արժեքը եւ վարձակալության դիմաց ստացվելիք եկամուտը)՝ 213 500, բնակելի տներ (արժեքը)՝ 129 000, կենցաղային իրեր (արժեքը)՝ 45 950, ավտոմեքենա (արժեքը)՝ 10 000, գյուղատնտեսություն եւ անասնապահություն (վաճառքից ստացվելիք եկամուտը, ինչպես նաև պտղատու ծառերի եւ անասունների արժեքը)՝ 465 390, ուսուցչի աշխատավարձ՝ 50 400, ապրուստի հետ կապված ծախսեր՝ 12 000:

գ) Ռամիզ Ջեբրայիլով

25. 1960 թվականին ծնված պրն Ռամիզ Ջեբրայիլովը, որն ամուսնացած է եւ ունի չորս երեխա, Լաչինում աշխատել է որպես ինժեներ: Դատարան ներկայացված իր գանգատում նա նշել է, որ առողջական վիճակի պատճառով անցել է թոշակի եւ ամսական ստացել է 25 ԱՄՆ դոլարին համարժեք գումարի չափով կենսաթոշակ եւ ամսական 5 ԱՄՆ դոլարին համարժեք գումարի չափով պետական աջակցություն՝ իր ընտանիքի յուրաքանչյուր անդամի համար: 2010 թվականի հունիսին Դատարան ներկայացված իր փաստարկներում նա նշել է, որ տեսել է 2001 թվականին նկարահանված՝ Լաչինի վերաբերյալ տեսանյութը, ինչից իրեն պարզ է դարձել, որ իր բնակելի տունն այրվել է. ըստ հարեւանների՝ դա տեղի է ունեցել Լաչինից իր հեռանալուց մի քանի օր հետո: 2016 թվականի հունիսին նա նշել է, որ շարունակել է աշխատել եւ եկամուտ է ստացել Բաքվում: Այնուամենայնիվ, այդ ժամանակվանից նա անցել է թոշակի՝ ստանալով ամսական 115 ադրբեջանական մանաթ կենսաթոշակ: Իր երեխաների աշխատավարձերից եւ պետական աջակցությունից ընտանիքը ամսական ստացել է նաև շուրջ 600 ադրբեջանական մանաթ:

26. Նյութական վնասի հատուցման իր պահանջում պրն Զեբրայիլովը պնդել է, որ իր տեխնիկական անձնագրում նշված հողակտորի չափսն իրականում եղել է ոչ թե 480 քառ. մետր, ինչպես նշված է անձնագրում, այլ՝ 5 000 քառ. մետր: Հիմնվելով հողի քառակուսի մետրի ներկայիս գնահատված արժեքի վրա՝ 40 ադրբեջանական մանաթ՝ նա պահանջել է ամբողջ փաստացի տարածքի արժեքի դիմաց հատուցում: Բացի տեխնիկական անձնագրում նկարագրված երկհարկանի բնակելի տնից եւ պահեստից՝ նա ունեցել է նաեւ այլ պահեստ, գոմ, ավտոտնակ եւ ջրի բնական աղբյուր: Նա պահանջել է շենքերի եւ աղբյուրի ամբողջ արժեքի, ինչպես նաեւ ամառվա ընթացքում, երբ ընտանիքը դուրս էր գալիս Լաչինից եւ վարձակալության տալիս բնակելի տունը, վարձակալությունից ստացվելիք եկամտի կորստի դիմաց փոխհատուցում: Նա պահանջել է նաեւ 1992 թվականին իր ընտանիքի թողած կենցաղային իրերի, այդ թվում՝ 16 ձեռագործ գորգի ամբողջ արժեքի դիմաց փոխհատուցում: Պրն Զեբրայիլովը եւ նրա ընտանիքի անդամները մշակել են հողը եւ պահել են անասուններ. 1992 թվականին նրանք ունեցել են 81 պտղատու ծառ, 12 կով, 8 հորթ, 200 ոչխար եւ 170 գառ: Նա պահանջել է անասունների ամբողջ արժեքի, ինչպես նաեւ մրգի, բանջարեղենի, կաթի եւ այլ կաթնամթերքի, մսի եւ բրդի վաճառքից ստացվելիք եկամտի կորստի դիմաց փոխհատուցում: Նա պահանջել է նաեւ «Ավտոսերվիս» բիզնեսի ամբողջ արժեքի դիմաց փոխհատուցում, որը կազմել է 5 000 քառ. մետր մակերեսով հող, շենք, գործիքներ եւ մեքենաներ:

27. 2002 թվականի ապրիլից մինչեւ 2016 թվականի հունիսն ընկած ժամանակահատվածում հասցված նյութական վնասի դիմաց պրն Զեբրայիլովն ընդհանուր պահանջել է 1 849 555 ադրբեջանական մանաթ (մոտավորապես 925 000 եվրո)՝ յուրաքանչյուր կատեգորիայի համար հետեւյալ գումարի չափով՝ հող (արժեքը)՝ 200 000, շենքեր եւ աղբյուր (արժեքը եւ վարձակալության դիմաց ստացվելիք եկամուտը)՝ 222 000, կենցաղային իրեր (արժեքը)՝ 29 455, գյուղատնտեսություն եւ անասնապահություն (վաճառքից ստացվելիք եկամուտը, ինչպես նաեւ անասունների արժեքը)՝ 1 168 100, «Ավտոսերվիս» բիզնես (հողի, սարքավորումների եւ մեքենաների արժեքը)՝ 230 000:

դ) Ակիֆ Հասանով

28. 1959 թվականին ծնված պրն Ակիֆ Հասանովը Աղբուլաղում աշխատել է որպես ուսուցիչ: Դատարան ներկայացված իր գանգատում նա նշել է, որ ստացել է ուսուցչի աշխատավարձ եւ պետության կողմից վճարվող շատ քիչ հավելավճար, ինչպես նաեւ որոշակի նյութական օգնություն: Նա դժվարությամբ է կարողացել հոգալ իր եւ իր ընտանիքի հինգ անդամների կարիքները: 2016 թվականի հունիսին նա նշել է, որ Լաչինից հեռանալուց հետո տարբեր աշխատանքներ է կատարել՝ ունենալով շատ ցածր եկամուտ: Նա չի կարողացել ուսուցչի կամ դպրոցի տնօրենի աշխատանք գտնել Բաքվում:

29. Նյութական վնասի հատուցման իր պահանջում պրն Հասանովը նշել է, որ իր հողի չափսը կազմել է 8 200 քառ. մետր, ինչը հակասում է տեխնիկական անձնագրում գրանցված 1 600 քառ. մետրին: Այդուհանդերձ, նա պահանջել է միայն հողի գրանցված հատվածի դիմաց փոխհատուցում. քանի որ նա չի իմացել դրա ներկայիս շուկայական արժեքը, նա պահանջել է վարձակալությունից ստացվելիք եկամտի գնահատված կորստի դիմաց հատուցում: Բացի տեխնիկական անձնագրում նշված երկհարկանի բնակելի տնից եւ պահեստից՝ նա ունեցել է նաեւ ամբար եւ ավտոտնակով լրացուցիչ մեծ շենք: Նա պահանջել է շենքերի ամբողջ արժեքի, ինչպես նաեւ ամբողջ տարվա ընթացքում վարձակալության տրվող երկհարկանի բնակելի տան մասերի վարձակալությունից ստացվելիք եկամտի կորստի դիմաց փոխհատուցում: Նա պահանջել է նաեւ 1992 թվականին իր ընտանիքի թողած կենցաղային իրերի, այդ թվում՝ 20 ձեռագործ գորգի ամբողջ արժեքի, ինչպես նաեւ օգտագործված «Նիվա» մակնիշի ավտոմեքենայի արժեքի դիմաց փոխհատուցում: Պրն Հասանովը եւ նրա ընտանիքի անդամները մշակել են հողը, ինչպես նաեւ պահել են մեղուներ ու անասուններ. 1992 թվականին նրանք ունեցել են 141 պտղատու ծառ, ազնվամորու թուփ, 50 մեղվի փեթակ, 3 ձի, 16 կով, 100 ոչխար, 50 հնդկահավ եւ 50 սագ: Նա պահանջել է մեղուների, ձիերի, կովերի եւ ոչխարների ամբողջ արժեքի, ինչպես նաեւ մրգի, բանջարեղենի, մեղրի, մեղուների, հորթերի, կաթի,

գառների, բրդի, պանրի եւ սագերի փետուրների վաճառքից ստացվելիք եկամտի կորստի փոխհատուցում: Նա ցանկացել է ստանալ նաեւ ուսուցչի իր աշխատանքի կորցված աշխատավարձի եւ Բաքվում իր ընտանիքի անդամների ապրուստի հետ կապված ծախսերի փոխհատուցում:

30. 2002 թվականի ապրիլից մինչեւ 2016 թվականի հունիսն ընկած ժամանակահատվածում հասցված նյութական վնասի դիմաց պրն Հասանովն ընդհանուր պահանջել է 2 621 490 ադրբեջանական մանաթ (մոտավորապես 1 300 000 եվրո)՝ յուրաքանչյուր կատեգորիայի համար հետեւյալ գումարի չափով՝ հող (վարձակալության դիմաց ստացվելիք եկամուտը)՝ 84 000, շենքեր (արժեքը եւ վարձակալության դիմաց ստացվելիք եկամուտը)՝ 320 000, կենցաղային իրեր (արժեքը)՝ 91 440, ավտոմեքենա (արժեքը)՝ 12 000, գյուղատնտեսություն եւ անասնապահություն (վաճառքից ստացվելիք եկամուտը, ինչպես նաեւ մեղուների եւ անասունների արժեքը)՝ 2 017 650, ուսուցչի աշխատավարձ՝ 50 400, ապրուստի հետ կապված ծախսեր՝ 46 000:

ե) Ֆեխրեդին Փաշաեւ

31. 1956 թվականին ծնված պրն Ֆեխրեդին Փաշաեւը, որն ամուսնացած է եւ ունի երեք երեխա, Լաչինում աշխատել է որպես Տրանսպորտի նախարարության գլխավոր ինժեներ: Դատարան ներկայացված գանգատի համաձայն՝ իր ընտանիքի համար նա ամսական ստացել է ընդհանուր 125 000 ադրբեջանական մանաթ (նորից, ենթադրաբար, «հին» մանաթ)՝ որպես տեղահանված անձանց պետական աջակցություն. բացի այդ, նրա կինն ամսական ստացել է 170 000 մանաթ թոշակ: 2010 թվականին նա ներկայացրել է իր աշխատանքային գրքույկի պատճենը, որում նշվել էր, որ 1993 թվականի ապրիլի 1-ին նա նշանակվել էր իր նախկին պաշտոնում՝ որպես գլխավոր ինժեներ. Լաչինի շրջանը գրավելուց հետո հաստիքը բացվել էր Աղջաբեդիում (Բաքվից մոտավորապես 300 կմ դեպի արեւմուտք) գտնվող՝ նախարարության ձմեռային հանքավայրի հաստիքացուցակում: 2003 թվականի հունվարին այնտեղ

նրա աշխատանքը դադարեցվել է: 2016 թվականի հունիսին նա նշել է, որ Լաչինից հեռանալուց հետո չի կարողացել գլխավոր ինժեների աշխատանք գտնել Բաքվում:

32. Նյութական վնասի հատուցման իր պահանջում պրն Փաշաեւը պահանջել է տեխնիկական անձնագրում նկարագրված իր հողի ամբողջ արժեքի դիմաց փոխհատուցում՝ հիմնվելով քառակուսի մետրի ներկայիս գնահատված արժեքի՝ 200 ադրբեջանական մանաթի վրա: Նա պահանջել է նաեւ այն գումարը, որը կարող էր հավաքվել այդ հողակտորը 14 տարվա ընթացքում՝ 2002 թվականի ապրիլից մինչեւ 2016 թվականի հունիսն ընկած ժամանակահատվածում վարձակալության տալու դեպքում: Ինչպես նկարագրված է տեխնիկական անձնագրում, նա ունեցել է երկհարկանի բնակելի տուն, մեկ այլ փոքր բնակելի տուն, որն օգտագործել է որպես ամառանոց, ինչպես նաեւ փոքր պահեստ: Նա պահանջել է շենքերի ամբողջ արժեքի, ինչպես նաեւ հաշվարկված այն գումարի չափով փոխհատուցում, որը կարող էր ստացվել երկհարկանի բնակելի շենքը վարձակալության տալու դեպքում: Նա պահանջել է նաեւ 1992 թվականին իր ընտանիքի թողած կենցաղային իրերի, այդ թվում՝ 10 ձեռագործ գորգի եւ 96 000 ադրբեջանական մանաթ արժողությամբ ոսկյա զարդերի ամբողջ արժեքի դիմաց փոխհատուցում: Պրն Փաշաեւը եւ նրա ընտանիքի անդամներն իրենց հայրենի գյուղում՝ Կամալիում, մշակել են մեկ հեկտար հող, ինչպես նաեւ պահել են մեղուներ եւ անասուններ. 1992 թվականին նրանք ունեցել են 500 պտղատու ծառ, 20 մեղվի փեթակ եւ 20 կով: Նա պահանջել է մեղուների եւ կովերի ամբողջ արժեքի, ինչպես նաեւ մրգի, մեղրի, մեղուների, հորթերի եւ կաթի վաճառքից ստացվելիք եկամտի կորստի դիմաց փոխհատուցում: Նա նաեւ ցանկացել է ստանալ փոխհատուցում՝ որպես գլխավոր ինժեներ իր կորցրած աշխատավարձի եւ Բաքվում իր ընտանիքի ապրուստի հետ կապված ծախսերի, այդ թվում՝ Լաչինից իրենց հեռանալուց հետո առաջին երեք տարվա ընթացքում բնակելի տուն վարձակալելու համար վճարված գումարի դիմաց:

33. Նյութական վնասի դիմաց պրն Փաշաեն ընդհանուր պահանջել է 2 224 090 ադրբեջանական մանաթ (մոտավորապես 1 100 000 եվրո)՝ յուրաքանչյուր կատեգորիայի համար հետեւյալ գումարի չափով՝ հող (արժեքը եւ վարձակալության դիմաց ստացվելիք եկամուտը)՝ 107 860, շենքեր (արժեքը եւ վարձակալության դիմաց ստացվելիք եկամուտը)՝ 252 000, կենցաղային իրեր (արժեքը)՝ 134 630, գյուղատնտեսություն եւ անասնապահություն (վաճառքից ստացվելիք եկամուտը, ինչպես նաեւ մեղուների եւ անասունների արժեքը)՝ 1 494 800, ինժեների աշխատավարձ՝ 201 600, ապրուստի հետ կապված ծախսեր՝ 33 200:

զ) Քառացա (Սաղաթել) Զաբրայիլով

34. 1940 թվականին ծնված պրն Քառացա Զաբրայիլովը, որն ամուսնացած էր եւ ուներ հինգ երեխա, 2005 թվականի հունիսի 19-ին մահացել է: Նրա գանգատով վարույթը շարունակել է նրա որդին՝ 1970 թվականի հուլիսին ծնված Սաղաթել Զաբրայիլովը:

35. Նյութական վնասի հատուցման իր պահանջում պրն Սաղաթել Զաբրայիլովը նշել է, որ իր ընտանիքի սեփականությունը համարվող գյուղատնտեսական նշանակության հողի մակերեսը աստիճանական ընդլայնումից հետո իրականում կազմել է ոչ թե 753.6 քառ. մետր, ինչպես նշված է տեխնիկական անձնագրում, այլ 8 000 քառ. մետր, եւ հատկացման մասին որոշումը ներկայացրել է Դատարան: Իր պահանջում նշված արժեքը վերաբերել է ամբողջ փաստացի տարածքին: Բացի տեխնիկական անձնագրում նկարագրված երկհարկանի բնակելի տնից՝ ընտանիքն ունեցել է նաեւ գոմ, պահեստ եւ ջրավազան: Նա պահանջել է շենքերի եւ ջրավազանի ամբողջ արժեքի, ինչպես նաեւ երկհարկանի բնակելի տան այն մասերի վարձակալությունից ստացվելիք եկամտի կորստի դիմաց փոխհատուցում, որոնք բնակելի տան չափսերի շնորհիվ կարող էին ամբողջ տարվա ընթացքում վարձակալության տրվել: Նա պահանջել է նաեւ 1992 թվականին իր ընտանիքի թողած կենցաղային իրերի, այդ թվում՝ 26 ձեռագործ գորգի ամբողջ արժեքի

դիմաց փոխհատուցում: Ընտանիքը մշակել է հողը, ինչպես նաև պահել է մեղուներ ու անասուններ. 1992 թվականին նրանք ունեցել են 66 պտղատու ծառ, 40 մեղվի փեթակ, 16 կով, 150 ոչխար եւ 80 հավ: Պրն Ջաբրայիլովը պահանջել է մեղուների եւ անասունների ամբողջ արժեքի, ինչպես նաև մրգի, մեղրի, հորթերի եւ գառների, ինչպես նաև կովերից, ոչխարներից եւ հավերից ստացված մթերքի վաճառքից ստացվելիք եկամտի կորստի դիմաց փոխհատուցում: Նա պահանջել է նաև գորգագործության եւ հացաթխման ընտանեկան բիզնեսներից ստացվելիք եկամտի կորստի փոխհատուցում: Վերջապես, նա ցանկացել է ստանալ ապրուստի հետ կապված այն ծախսերի դիմաց փոխհատուցում, որն իր ընտանիքը կարող էր կատարել Լաչինում: Այնուամենայնիվ, քանի որ տվյալ ժամանակահատվածում նրանք չեն ապրել այնտեղ, այս գումարը պետք է հանվի ընդհանուր պահանջից:

36. Այսպիսով, նյութական վնասի դիմաց պրն Սաղաթել Ջաբրայիլովը պահանջել է ընդհանուր 2 752 835 ադրբեջանական մանաթ (մոտավորապես 1 400 000 եվրո)՝ յուրաքանչյուր կատեգորիայի համար հետեւյալ գումարի չափով՝ հող (արժեքը)՝ 60 000, շենքեր եւ ջրավազան (արժեքը եւ վարձակալության դիմաց ստացվելիք եկամուտը)՝ 452 000, կենցաղային իրեր (արժեքը)՝ 54 475, գյուղատնտեսություն եւ անասնապահություն (վաճառքից ստացվելիք եկամուտը, ինչպես նաև մեղուների եւ անասունների արժեքը)՝ 2 051 960, այլ ձեռնարկատիրական գործունեություն (վաճառքից ստացվելիք եկամուտը)՝ 134 400:

2. Կառավարության փաստարկները

37. Կառավարությունը պահանջել է, որ Դատարանը մերժի դիմումատուների՝ ոչ նյութական վնասների հատուցման պահանջներն այն հիմքով, որ դրանք անհիմն են եւ չափազանցված: Կառավարությունն ակնարկել է, որ այն ապրումները, որոնք դիմումատուները ենթադրաբար ունեցել են

տարիների ընթացքում, ավելի շատ կապված են եղել ռազմական հակամարտության եւ դրա հետեւանքների հետ, քան սույն գործում ներկայացված՝ գույքից եւ տնից օգտվելու հնարավորությունից զրկված լինելու հարցի հետ: Ավելին, որեւէ տեղ չի նշվել, որ նրանք ունեցել են մշտական հուզական ապրումներ, որոնք գրեթէ երկու տասնամյակ շարունակվել են:

38. Ինչ վերաբերում է դիմումատուների՝ նյութական վնասի հատուցման պահանջներին, ապա դրանք եղել են անհիմն եւ նույնպես պետք է մերժվեն: Ընդհանուր առմամբ, Կառավարությունը պնդել է, որ մինչեւ 2002 թվականի ապրիլի 26-ը հասցված վնասը *ratione materiae* (առարկայական ընդհատության առումով) Դատարանի իրավասության սահմաններից դուրս է եղել եւ, հետեւաբար, չէր կարող փոխհատուցվել: Սա վերաբերել է բնակելի տների եւ շարժական գույքի (այդ թվում՝ կենցաղային իրերի, ավտոմեքենաների, անասունների եւ մշակաբույսերի) ավերմանը կամ դրանց հասցված վնասին: Այս առնչությամբ, նրանք հղում են կատարել Դատարանի հիմնական վճռին, որում Դատարանը հանգել է այն եզրակացության, որ պարզ չէր՝ արդյոք դիմումատուների բնակելի տներն ավերվել են, թե դեռ մասամբ կամ ամբողջությամբ կանգուն են եղել, եւ որ նրանց շարժական գույքն, ամենայն հավանականությամբ, ոչնչացվել է 1992 թվականին տեղի ունեցած ռազմական հարձակման կամ հետագա տարիների ընթացքում (§ 146):

39. Բնակելի տների առնչությամբ Կառավարությունը մատնանշել է դիմումատուների՝ արդարացի փոխհատուցման վերաբերյալ իրենց դիտարկումներում արված տարբեր հայտարարություններում առկա անհամապատասխանությունները, որոնցում նրանք կարծիք են հայտնել, *inter alia* (ի թիվս այլնի), որ իրենց գույքը ռազմական հարձակման հետեւանքով կա՛մ այրվել է, կա՛մ էականորեն վնասվել: Ավելին, թե՛ բնակելի տների, եւ թե՛ շարժական գույքի հետ կապված՝ դիմումատուներին չի հաջողվել ապացուցել 2002 թվականին դրանց առկայությունը: Կառավարության կարծիքով՝ ապացուցման պարտականությունը կրել են այն դիմումատուները, որոնք պետք է

ցույց տային, որ նյութական վնասը հասցվել է ներկայացված համապատասխան այն փաստաթղթերով հայտնաբերված խախտումների հետեւանքով, որոնց մեջ նշվում է ոչ միայն գույքի առկայությունը, այլ նաեւ հասցված վնասը եւ փոխհատուցման ենթակա գումարը: Դիմումատուները չեն ներկայացրել այդպիսի ապացույց եւ, փոխարենը, իրենց պահանջները հիմնել են չհաստատված ենթադրությունների վրա: Մինչդեռ, Դատարանը գտել է, որ ներկայացված *prima facie* ապացույցների միջոցով հաստատվել է, որ փախուստի դիմելիս դիմումատուներն ունեցել են բնակելի տներ եւ հող (հիմնական վճիռ, § 143). շարժական գույքի վերաբերյալ որեւէ բան չի նշվել: Ավելին, դիմումատուների՝ կորցված եկամտի հետ կապված պահանջները եղել են չհիմնավորված եւ կրել են տեսական բնույթ:

40. Կառավարությունն այնուհետեւ նշել է, որ, բացի չհիմնավորված լինելուց, դիմումատուների փաստարկները եղել են նաեւ անհամապատասխան եւ հակասական: Ի թիվս այլնի, գործում իրենց սկզբնական հայտարարությունները եւ արդարացի փոխհատուցման վերաբերյալ իրենց փաստարկները տարբերվել են իրենց տեխնիկական անձնագրերում պարունակվող տեղեկություններից: Նույնիսկ եթե այդ անհամապատասխանությունները չեն խոչընդոտել, որ Դատարանը գտնի Կոնվեցիայի՝ գույքից օգտվելու հնարավորության հետ կապված խախտում, Կառավարությունը պնդել է, որ դրանք վնասը գնահատելու հարցում կարելուր նշանակություն ունեն: Ավելին, նյութական վնասի դիմաց պահանջվող առանձին գումարները վարույթների ընթացքում էապես տարբերվել են: Օրինակ, պրն Էլխան Չիրագովը, ի տարբերություն 2016 թվականին իր կողմից պահանջված 1 573 180 ադրբեջանական մանաթի, արդարացի փոխհատուցման վերաբերյալ 2012 թվականի հուլիսի 9-ի իր փաստարկներում պահանջել է 1 583 980 ադրբեջանական մանաթ եւ 2 186 980 ադրբեջանական մանաթ՝ վերջին փաստարկներին կցված՝ իր կողմից ստորագրված հայտարարության մեջ: Չնայած պրն Ռամիզ Ջեբրայիլովը 2016 թվականին պահանջել է 1 849 555 ադրբեջանական մանաթ, 2012 թվականին ներկայացված

փաստարկներում նա պահանջել է 931 600 ադրբեջանական մանաթ, իսկ այս փաստարկներին կցված հայտարարության մեջ՝ 1130 000 ադրբեջանական մանաթ: Մյուս դիմումատուների պահանջների մեջ նույնպես եղել են նմանատիպ անհամապատասխանություններ:

41. Ավելին, իրենց գույքի ներկայիս արժեքի չափով փոխհատուցում պահանջելով՝ դիմումատուները ենթադրել են, որ Դատարանի կողմից հայտնաբերված խախտումն առնչվել է գույքից զրկելուն: Այնուամենայնիվ, իրավաբանորեն ենթադրվող կամ օրենսդրորեն որեւէ այդպիսի զրկում տեղի չի ունեցել, եւ դիմումատուները պահպանել են գույքի նկատմամբ իրենց իրավունքը: Փոխարենը, Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի խախտումը վերաբերել է իրենց գույքից օգտվելու հնարավորությունից զրկելուն կամ դրա կորստին: Այդպիսի հանգամանքներում, Դատարանի մոտեցումն է եղել (ինչպես ձեւակերպված է, օրինակ, վերելում հիշատակված՝ *Լոիզիզի* գործում) գնահատել գույքի չօգտագործման հետ կապված կորուստը՝ հաշվի առնելով համապատասխան ժամանակահատվածում որպես գույքի արժեքի տոկոս հաշվարկվող տարեկան հողային ռենտան:

42. Կառավարությունը նաեւ պնդել է, որ հասցված վնասները հաշվարկելիս հիմք չի կարող ընդունվել դիմումատուների ենթադրյալ գույքի ներկայիս շուկայական արժեքը, այլ պետք է հաշվի առնվեն 1992 թվականին Լաչինից նրանց հեռանալու ժամանակ գործող գներն ու համապատասխան արժույթը: Կառավարությունը ներկայացրել է Խորհրդային միության որոշ փաստաթղթեր, որոնցում թվարկված են բնակելի տների եւ այլ շենքերի, կենցաղային իրերի, ավտոմեքենաների, պտղատու ծառերի, անասունների, ինչպես նաեւ գյուղատնտեսական արտադրանքի՝ տվյալ ժամանակահատվածում գործող պաշտոնական գները:

3. Դատարանի գնահատականը

ա) Նախնական դիտարկումներ

43. Արդարացի փոխհատուցման հարցը հիմնական վճռով հետագա փուլ հետաձգելով՝ Դատարանն անդրադարձել է սույն գործի առանձնահատուկ բնույթին (§ 224):

44. Այդ առանձնահատուկ բնույթը պայմանավորված է մի շարք հատկանիշներով: Դրանցից մեկն այն է, որ սույն գործն առնչվում է շարունակվող հակամարտությանը: Լեռնային Ղարաբաղի հակամարտության ակտիվ ռազմական փուլն ընթացել է 1992-1994 թվականներին, սակայն, չնայած 1994 թվականի մայիսին կնքված՝ հրադադարի մասին համաձայնագրին եւ ԵԱՀԿ Մինսկի խմբի շրջանակներում կազմակերպվող բանակցություններին, խաղաղության համաձայնագիր ձեռք չի բերվել (նախապատմության եւ ընթացիկ իրավիճակի առավել մանրամասն նկարագրության համար տե՛ս հիմնական վճռի §§ 12-31): Քսաներեք տարի անց հրադադարի մասին համաձայնագրի խախտումները շարունակում են տեղի ունենալ: Ինչպես երկու կողմերն արդարացի փոխհատուցման վերաբերյալ իրենց դիտարկումներում նշել են, շփման գծում բռնության դեպքերը վերջին տարիներին ավելացել են, հատկապես՝ 2016 թվականի ապրիլի սկզբի ռազմական բախումների ժամանակ:

45. Գործի հետ կապված մեկ այլ կարեւոր ասպեկտն այն է, որ չնայած այն իրադարձությունները, որոնք ստիպել են դիմումատուներին փախչել՝ թողնելով իրենց գույքը եւ տները, տեղի են ունեցել 1992 թվականի մայիսին, պատասխանող պետությունը՝ Հայաստանի Հանրապետությունը, Կոնվենցիան վավերացրել է տասը տարի հետո՝ 2002 թվականի ապրիլի 26-ին: Այսպիսով, մինչեւ 2002 թվականի ապրիլի 26-ը տեղի ունեցած իրադարձությունների մասով *ratione temporis* (ժամանակային) իրավագործություն չունենալով՝ Դատարանը եզրակացրել է, որ դիմումատուները Լաչինի շրջանում գտնվող հողի եւ բնակելի տների նկատմամբ դեռեւս ունեցել են գործող գույքային իրավունքներ (հիմնական

վճռի § 149): Դատարանը Հայաստանին պատասխանատու է համարել դիմումատուների՝ Կոնվենցիայի թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածով, ինչպես նաև Կոնվենցիայի 8-րդ եւ 13-րդ հոդվածներով նախատեսված իրավունքների շարունակական խախտման համար՝ սկսած Կոնվենցիան ուժի մեջ մտնելու օրվանից (§§ 201, 207-208 եւ 214-215):

46. Այսպիսով, Դատարանը գործ ունի շարունակվող մի իրավիճակի հետ, որի արմատներն ընկած են Լեռնային Ղարաբաղի եւ հարակից տարածքների շուրջ չլուծված հակամարտության հիմքում, եւ որը դեռեւս ազդեցություն է ունենում մեծ թվով անհատների վրա: Դատարան են մուտք եղել հակամարտության ընթացքում տեղահանման ենթարկված անձանց կողմից ներկայացված ավելի քան հազար անհատական գանգատներ, որոնց կեսից փոքր-ինչ ավելին ուղղված են Հայաստանի, իսկ մնացածը՝ Ադրբեջանի դեմ: Այս գործերով դիմումատուները ներկայացնում են նախնական հաշվարկով մեկ միլիոնը գերազանցող այն անձանց միայն փոքր մասը, որոնք ստիպված են եղել փախչել հակամարտության ժամանակ եւ այդ ժամանակվանից ի վեր ի վիճակի չեն եղել վերադառնալու այնտեղ, որտեղ իրենց տունն ու գույքն է, կամ հատուցում ստանալու՝ [գույքից] օգտվելու իրենց իրավունքի կորստի դիմաց:

47. Այս առնչությամբ, Դատարանը տեղին է համարում եւս մեկ անգամ ընդգծել լրացուցչության (սուբսիդիարության) սկզբունքը: Սույն գործում այն ունի եւ՛ քաղաքական, եւ՛ իրավական կողմեր:

48. Ինչ վերաբերում է քաղաքական կողմին, ապա Դատարանն արդեն անդրադարձել է, նախքան Եվրոպայի խորհրդին անդամակցելը, Հայաստանի եւ Ադրբեջանի կողմից Լեռնային Ղարաբաղի հակամարտությունը խաղաղ կարգավորելու մասով ստանձնած պարտավորություններին (հիմնական վճռի § 87): Մինչ այժմ Հայաստանի եւ Ադրբեջանի կողմից Կոնվենցիայի վավերացումից ի վեր անցել է մոտավորապես տասնհինգ տարի՝ առանց հակամարտությանը քաղաքական լուծում տալու որեւէ հեռանկար ունենալու: Դատարանը միայն կարող է ընդգծել, որ քաղաքական մակարդակով լուծում

գտնելը ներգրավված երկու պետությունների պարտավորությունն է (տե՛ս, *mutatis mutandis* (համապատասխան փոփոխություններով), *Կովաչիչը եւ այլք ընդդեմ Սլովենիայի* [ՄՊ] [*Kovačić and Others v. Slovenia* [GC]], թիվ 44574/98 եւ մյուս 2-ը, §§ 255-256, 2008 թվականի հոկտեմբերի 3, եւ *Դեմոպուլոսը եւ այլք ընդդեմ Թուրքիայի* (որոշում) [ՄՊ] [*Demopoulos and Others v. Turkey* (dec.) [GC]], թիվ 46113/99, եւ մյուս 7-ը, § 85, ՄԻԵԴ 2010):

49. Անդրադառնալով իրավական կողմին՝ Դատարանը կրկին նշում է, որ Կոնվենցիայի համակարգի հիմքում ընկած է լրացուցչության սկզբունքը (*Կուրիչը եւ այլք ընդդեմ Սլովենիայի* (արդարացի փոխհատուցում) [ՄՊ] [*Kurić and Others v. Slovenia* (just satisfaction) [GC]], թիվ 26828/06, § 134, ՄԻԵԴ 2014, եւ դրանում հիշատակված գործերը): Այս սկզբունքը ձեւակերպված է Կոնվենցիայի 1-ին հոդվածում, որի համաձայն, Պայմանավորվող կողմերն իրենց իրավագործության ներքո գտնվող յուրաքանչյուրի համար ապահովում են Կոնվենցիայով երաշխավորված իրավունքներն ու ազատությունները, մինչդեռ 19-րդ հոդվածի համաձայն՝ պետությունների կողմից Կոնվենցիայով եւ դրան կից արձանագրություններով ստանձնած պարտավորությունների կատարումն ապահովում է Դատարանը: Ավելին, սկզբունքն ընկած է դիմումատուների կողմից, 35-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն, իրավական պաշտպանության բոլոր ներպետական միջոցները սպառելու եւ 13-րդ հոդվածի համաձայն՝ պետությունների՝ Կոնվենցիայի խախտումների համար իրավական պաշտպանության արդյունավետ միջոցներ տրամադրելու համապատասխան պարտավորության վերաբերյալ պահանջի հիմքում (տե՛ս *Ակդիվարը եւ այլք ընդդեմ Թուրքիայի* [*Akdivar and Others v. Turkey*], 1996 թվականի սեպտեմբերի 16, § 65, *Վճիռների եւ որոշումների մասին զեկույցներ* 1996-IV, եւ *Դեմոպուլոսը եւ այլք ընդդեմ Թուրքիայի*՝ վերելում հիշատակված, § 69): Դատարանը նույնպես իր՝ Կոնվենցիայի պարբերական խախտումներին առնչվող մոտեցման մեջ առաջնորդվում է լրացուցչության սկզբունքով՝ 46-րդ հոդվածի համաձայն մշակված՝ պիլոտային վճիռների կայացման ընթացակարգը կիրառելիս

(տե՛ս, օրինակ, *Ալիշիչը եւ այլք ընդդեմ Բոսնիա եւ Հերցեգովինայի, Խորվաթիայի, Սերբիայի, Սլովենիայի եւ Մակեդոնիայի նախկին Հարավսլավական Հանրապետության* [ՄՊ] [*Ališić and Others v. Bosnia and Herzegovina, Croatia, Serbia, Slovenia and the Former Yugoslav Republic of Macedonia* GC]], թիվ 60642/08, § 143, ՄԻԵԴ 2014):

50. Ավելին, Դատարանը, ինչպես ընդգծել է լուծում չստացած հակամարտություններից բխող այլ գործերով կամ պարբերական խախտումներ բացահայտող գործերով, չի դադարում ընդգծել, որ այն առաջին ատյանի դատարան չէ: Այն չունի կարողություն եւ ոչ էլ դա համապատասխանում է իր՝ որպես միջազգային դատարանի գործառույթին՝ քննել մեծ թվով գործեր, որոնց դեպքում պահանջվում է պարզել կոնկրետ փաստեր կամ հաշվարկել դրամական հատուցումը, որոնք երկուսն էլ, սկզբունքորեն եւ որպես արդյունավետ գործելակերպ, պետք է լինեն ներպետական մարմնի իրավազորության տիրույթում (տե՛ս, *mutatis mutandis, Դեմոպուլոսը եւ այլք՝* վերելում հիշատակված, § 69, եւ *Ալիշիչը եւ այլք՝* վերելում հիշատակված, §§ 142-143):

51. Հատկապես Կառավարության կողմից անդամակցության հետ կապված հանձնառությունները, ինչպես նաեւ իր՝ Կոնվենցիայով սահմանված պարտավորությունները չկատարելու պատճառով է Դատարանն ստիպված եղել սույն գործով հանդես գալ որպես առաջին ատյանի դատարան՝ հաստատելով շատ տարիների վաղեմություն ունեցող համապատասխան փաստերը, գնահատելով գույքային պահանջներին առնչվող ապացույցները եւ, վերջապես, գնահատելով դրամական հատուցման չափը: Այս ամենը պետք է դիտարկել՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ սույն գանգատը քննվում է որպես գերակա նախադեպային գործ, մինչդեռ Հայաստանի դեմ բերված հարյուրավոր նմանատիպ գործեր դեռեւս գտնվում են Դատարանի կողմից քննության փուլում:

52. Չբացառելով սույն գործով որպես արդարացի փոխհատուցում տրամադրվող որեւէ հատուցում՝ հիմնական վճռի արդյունավետ եւ կառուցողական ձեւով կատարման համար պահանջվում է ազգային

մակարդակով ընդհանուր միջոցների ստեղծում: Հիմնական վճռում տրվել են համապատասխան միջոցների վերաբերյալ ցուցումներ, որտեղ Դատարանը *inter alia* նշել է, որ «մինչև խաղաղության համապարփակ համաձայնագրի ընդունումը, հատկապես կարելի է նշանակություն կունենար գույքը հետ պահանջելու մեխանիզմի մշակումը, որը պետք է հեշտությամբ հասանելի լինի եւ ապահովի ապացուցման ճկուն չափանիշների վրա հիմնված ընթացակարգեր՝ թույլ տալով դիմումատուներին եւ նույն իրավիճակում հայտնված ցանկացած այլ անձի վերականգնել սեփականության իրենց իրավունքները եւ հատուցում ստանալ՝ [գույքից] օգտվելու իրենց իրավունքի կորստի դիմաց» (տե՛ս նաեւ հիմնական վճռի § 199):

բ) Արդարացի փոխհատուցման վերաբերյալ ընդհանուր սկզբունքները

53. Դատարանը վերահաստատում է իր նախադեպային իրավունքը, որի համաձայն այն վճռով, որով Դատարանը խախտում է հայտնաբերում, պատասխանող պետության վրա սովորաբար դրվում է խախտումը դադարեցնելու եւ դրա հետեւանքների համար այնպիսի եղանակով հատուցում կատարելու իրավական պարտավորություն, որպեսզի հնարավորինս վերականգնվի մինչև խախտումը գոյություն ունեցած իրավիճակը (*Կուրիչը եւ այլք՝ վերետում հիշատակված, § 79*): Պայմանավորվող պետությունները, որոնք գործի կողմեր են, սկզբունքորեն ազատ են ընտրելու այն միջոցները, որոնցով կատարելու են այն վճիռը, որով Դատարանը խախտում է հայտնաբերել: Վճռի կատարման եղանակի մասով հայեցողությունն արտացոլում է ընտրություն կատարելու ազատությունը՝ երաշխավորված իրավունքներն ու ազատություններն ապահովելու՝ Կոնվենցիայի 1-ին հոդվածով սահմանված պարտավորությունը դասելով Պայմանավորվող պետությունների առաջնային պարտավորությունների շարքին: Եթե խախտման բնույթը թույլ է տալիս *restitutio in integrum* (ամբողջական ռեստիտուցիա), ապա պատասխանող պետությունն ինքը պետք է դա իրականացնի, քանի որ Դատարանը դա անելու ո՛չ լիազորություն ունի եւ ոչ էլ

գործնական հնարավորություն: Մյուս կողմից, եթե ազգային իրավունքով հատուցում չի թույլատրվում կամ թույլատրվում է մասնակի հատուցում, ապա 41-րդ հոդվածով Դատարանին շնորհվում է լիազորություն՝ տուժած կողմին տրամադրելու այնպիսի փոխհատուցում, որն այն նպատակահարմար է համարում (*Պապամիխալոպուլոսը եւ այլք ընդդեմ Հունաստանի [Papamichalopoulos and Others v. Greece]*, (Հոդված 50), 1995 թվականի հոկտեմբերի 31, § 34, շարք Ա թիվ 330 Բ, եւ *Կուրիչը եւ այլք՝ վերելում հիշատակված, § 80, եւ դրանում հիշատակված գործերը*): Այս առնչությամբ պետք է ընդգծել Նախարարների կոմիտեի՝ Կոնվենցիայի 46-րդ հոդվածի 2-րդ կետով նախատեսված՝ Դատարանի վճիռների կատարման նկատմամբ վերահսկողություն իրականացնելու հարցում ունեցած դերը (տե՛ս *Ֆերայն գեգեն Թիերֆաբրիկեն Շվայց (ՖգԹ) ընդդեմ Շվեյցարիայի* (թիվ 2) [ՄՊ] [*Verein gegen Tierfabriken Schweiz (VgT) v. Switzerland (no. 2)*] [GC]], թիվ 32772/02, §§ 84-88, ՄԻԵԴ 2009): Այնուամենայնիվ, Դատարանը հաշվի է առնում այն փաստը, որ որոշ իրավիճակներ՝ հատկապես երկարատեւ հակամարտություններին առնչվողները, իրականում ամբողջական հատուցման ենթակա չեն:

54. Ինչ վերաբերում է նյութական կորստի մասով պահանջներին, ապա Դատարանի նախադեպային իրավունքով սահմանվում է, որ դիմումատուի պահանջած վնասի հատուցման եւ Կոնվենցիայի խախտման միջեւ պետք է լինի հստակ պատճառահետեւանքային կապ: Համապատասխան դեպքերում դա կարող է ներառել վաստակի կորստի դիմաց հատուցում (*Կուրիչը եւ այլք՝ վերելում հիշատակված, § 81*):

55. Ինչ վերաբերում է անշարժ գույքի հետ կապված կորստին, ապա այն դեպքում, երբ գույքից զրկում տեղի չի ունեցել, բայց դիմումատուին թույլ չի տրվել մուտք ունենալ գույքին եւ, հետեւաբար, նա զրկվել է այն օգտագործելու եւ դրանից օգտվելու հնարավորությունից, Դատարանի ընդհանուր մոտեցումն է գնահատել կրած կորուստը՝ հաշվի առնելով հողերի վարձակալության՝ ըստ գույքի շուկայական արժեքի տոկոսի չափի հաշվարկված տարեկան վճարը,

որը համապատասխան ժամանակահատվածում հնարավոր էր վաստակել այդ գույքի միջոցով (*Լոհզիդու*՝ վերելում հիշատակված, § 33):

56. Դիմումատուի կրած նյութական կորստի մասով հատուցում կատարելու համար անհրաժեշտ գումարների ճշգրիտ հաշվարկի համար խոչընդոտ կարող է լինել խախտումից բխող վնասի ոչ հստակ բնույթը: Շնորհում, այնուամենայնիվ, դեռևս կարող է կատարվել՝ չնայած կորուստների գնահատման մեջ պարունակվող մի շարք անկանխատեսելի գործոններին, սակայն ինչքան մեծ է ներառված անցած ժամանակահատվածը, այնքան ոչ հստակ է դառնում խախտման եւ վնասի միջուկը: Այսպիսի գործերում այն հարցը, որի վերաբերյալ պետք է որոշում կայացնել, վերաբերում է նյութական կորստի մասով արդարացի փոխհատուցման չափին, որը պետք է շնորհվի դիմումատուին՝ հարց, որը որոշվում է Դատարանի հայեցողությամբ՝ հաշվի առնելով, թե ինչն է արդարացի (*Կուրիչը եւ այլք*՝ վերելում հիշատակված, § 82):

57. Բացի այդ, Դատարանը կրկին նշում է, որ ոչ նյութական կամ բարոյական վնասի վերաբերյալ որեւէ հստակ ձեւակերպված դրույթ չկա: *Վարնավան եւ այլք ընդդեմ Թուրքիայի* [*Varnava and Others v. Turkey*] ([ՄՊ], թիվ 16064/90 եւ մյուս 8-ը, § 224, ՄԻԵԴ 2009) եւ *Կիպրոսն ընդդեմ Թուրքիայի* [*Cyprus v. Turkey*] ((արդարացի փոխհատուցում) [ՄՊ], թիվ 25781/94, § 56, ՄԻԵԴ 2014) գործերով Դատարանը հաստատել է հետեւյալ սկզբունքները, որոնք աստիճանաբար ընդգրկվել են դրա նախադեպային իրավունքում: Այն իրավիճակները, որոնց դեպքում դիմումատուն կրել է ակնհայտ տրավմա՝ ֆիզիկական կամ հոգեբանական, ապրել է ցավ եւ տառապանք, տագնապ, անհանգստություն, հիասթափություն, անարդարության կամ նվաստացման զգացումներ, երկար ժամանակահատվածով անորոշություն, կյանքի խաթարում կամ հնարավորությունների իրական կորուստ, կարելի է տարբերակել այնպիսի իրավիճակներից, որոնց դեպքում դիմումատուի նկատմամբ կատարված խախտման մասով հանրային պաշտպանությունը Պայմանավորվող պետության համար պարտադիր ուժ ունեցող վճռի միջոցով արդեն իսկ փոխհատուցման

պատշաճ եղանակ է: Որոշ իրավիճակներում, երբ օրենքը, ընթացակարգը կամ գործելակերպը չեն համապատասխանում Կոնվենցիայի չափանիշներին, դա բավարար է խնդիրը լուծելու համար: Այլ իրավիճակներում, սակայն, խախտման ազդեցությունը կարող է համարվել այնպիսի բնույթի եւ աստիճանի, որ զգալիորեն խոչընդոտի դիմումատուի բարոյական բարեկեցությունն այնքանով, որ հետագա քայլերի անհրաժեշտություն առաջանա: Այդպիսի տարրերը ենթակա չեն հաշվարկման կամ քանակության ճշգրիտ որոշման գործընթացի: Եվ ոչ էլ Դատարանի խնդիրն է քաղաքացիական գործով կողմերի միջեւ մեղքի եւ հատուցման ենթակա վնասների բաշխում կատարելիս գործել քաղաքացիական իրավախախտումների մեխանիզմ ունեցող ներպետական դատարանին համարժեք: Դրա ղեկավար սկզբունքն արդարությունն է, որը նախեստառջ ենթադրում է ճկունություն եւ գործի բոլոր հանգամանքների օբյեկտիվ գնահատում առ այն, թե ինչն է արդար, արդարացի եւ ողջամիտ՝ հաշվի առնելով ոչ միայն այն իրավիճակը, որում գտնվում է դիմումատուն, այլեւ խախտման առաջացման ընդհանուր համատեքստը: Դրա ոչ նյութական շնորհումները նպաստում են այն փաստի ճանաչմանը, որ բարոյական վնասն առաջացել է մարդու հիմնարար իրավունքի խախտման հետեւանքով, եւ ամենալայն իմաստով արտացոլում են վնասի ծանրության աստիճանը:

58. Եվ վերջապես, Դատարանը նշում է, որ, գործի հանգամանքներից կախված, կարող է նպատակահարմար լինել նյութական եւ ոչ նյութական վնասի դիմաց ընդհանուր շնորհում տրամադրելը (տե՛ս *Սենտրո Եվրոպա 7 Ս.Ն.Լ-ն եւ Դի Ստեֆանոն ընդդեմ Իտալիայի* [ՄԴ] [*Centro Europa 7 S.r.l. and Di Stefano v. Italy* [GC]], թիվ 38433/09, § 222, ՄԻԵԴ 2012):

գ) Սույն գործով վնասների դիմաց շնորհում տրամադրելը

ի) Ընդհանուր նկատառումները

59. Հիմնական վճռում Դատարանը վճռել է, որ որեւէ նպատակ չի նշվել, որը կարող էր արդարացնել դիմումատուներին իրենց գույքից օգտվելու

հնարավորությունից զրկելը եւ այդ միջամտության դիմաց որեւէ հատուցում չտրամադրելը, եւ որ, հետեւաբար, խախտվել են եւ շարունակում են խախտվել դիմումատուների՝ գույքի նկատմամբ իրավունքները (§ 201): Ավելին, դիմումատուների՝ տուն մուտք ունենալու հնարավորության մերժումը չհիմնավորված միջամտություն է նրանց անձնական եւ ընտանեկան կյանքի, ինչպես նաեւ տան նկատմամբ հարգանքի իրավունքին (§ 207): Վերջապես, այս խախտումների առնչությամբ իրավական պաշտպանության հասանելի արդյունավետ միջոց չի եղել (§ 214): Դատարանը համարում է, որ դիմումատուների վերադարձը Լաչինի շրջանում գտնվող այն տարածք, որտեղ իրենց գունքն ու բնակելի տներն են եւ այն վնասի հատուցումը, որը նրանք կրել են 2002 թվականի ապրիլի 26-ից հետո ընկած ժամանակահատվածում, երբ նրանց զրկել են նման հնարավորությունից, վերջիններիս համար կստեղծելին գրեթե այնպիսի իրավիճակ, որում նրանք կլինեին, եթե նրանց՝ Կոնվենցիայով սահմանված իրավունքները չխախտվեին: Այնուամենայնիվ, Դատարանը, համաձայնելով դիմումատուների հետ, համարում է, որ նրանց՝ այդ տարածքներ վերադառնալու հնարավորությունը ներկայիս հանգամանքներում իրատեսական չլինելն ակնհայտ է, եւ որ ուսումնասիրված ժամանակահատվածում այդպիսի հնարավորություն գոյություն չի ունեցել (տե՛ս, օրինակ, հիմնական վճռի §§ 28-31-ը, 67-ը, 69-ը եւ 195-ը): Այսպիսով, սույն գործով հատուցում շնորհելը համարվում է պատշաճ արդարացի փոխհատուցում:

60. Ինչպես արդեն նշվել է, դիմումատուների՝ մինչեւ 2002 թվականի ապրիլի 26-ը կրած վնասն ուղղակիորեն չի առնչվում Դատարանի կողմից հայտնաբերված խախտումներին, եւ, հետեւաբար, չի կարող փոխհատուցվել 41-րդ հոդվածի հիման վրա: Բացի այդ, դիմումատուները նյութական վնասների հատուցման իրավունք ունենալու համար պետք է բավարար ապացույցներ ներկայացնեն այն մասին, որ իրենց գույքն այդ ժամանակ դեռ գոյություն է ունեցել: Հիմնական վճռում Դատարանը, հաշվի առնելով գործի հատուկ հանգամանքները, *prima facie* ապացույցներն ընդունել է որպես այն բանի

հիմնավորում, որ փախուստի դիմելիս նրանք ունեցել են բնակելի տներ եւ հող (§ 143): Ըստ էության, նույն մակարդակի ապացույցներ պետք է պահանջվեն 2002 թվականի ապրիլին նրանց գույքի շարունակվող գոյության եւ վիճակի վերաբերյալ:

ii) Նյութական վնասը

α) Հողերը եւ բնակելի տները

61. Հիմնական վճռում Դատարանը եզրակացրել է, որ դիմումատուները Լաշինից հեռանալու ժամանակ իրավունքներ են ունեցել հողի եւ բնակելի տների նկատմամբ, որոնք համարվել են «գույք» Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի իմաստով, եւ որ ոչինչ չի վկայել այն մասին, որ այդ իրավունքները հետագայում չեղյալ են ճանաչվել: Համապատասխանաբար, նրանք Լաշինի շրջանում գտնվող անշարժ գույքի նկատմամբ դեռեւս ունեն իրավունքներ (§ 149): Քանի որ դիմումատուները չեն զրկվել իրենց գույքից, հողի եւ բնակելի տների կորստի դիմաց, որպես այդպիսին, հատուցում չի կարող տրվել, սակայն հատուցում կարող է տրամադրվել միայն դիմումատուների՝ գույքն օգտագործելու եւ դրանից օգտվելու անկարողության մասով կորստի դիմաց:

62. Ինչ վերաբերում է բնակելի տներին, ապա Դատարանն ընդունել է, որ, չնայած դիմումատուների տեխնիկական անձնագրերի եւ նրանց՝ նախնական գանգատի մեջ տեղ գտած հայտարարությունների միջեւ առկա անհամապատասխանություններին, անձնագրերը ներկայացված այլ փաստաթղթերի հետ միասին գույքի նկատմամբ դիմումատուների իրավունքի վերաբերյալ *prima facie* ապացույցներ են (հիմնական վճիռ, §§ 141-143): Այնուամենայնիվ, արդարացի փոխհատուցման վերաբերյալ իրենց դիտարկումներում բոլոր դիմումատուները՝ բացառությամբ պրն Փաշաեի, պնդել են, որ իրենք ունեցել են տարբեր շենքեր եւ սարքավորումներ, որոնք կա՛մ նշված չեն եղել տեխնիկական անձնագրերում կամ նախորդ փաստարկներում, կա՛մ ենթադրվել է, որ դրանք ունեցել են այլ՝ նախկինում նշվածից տարբերվող

չափս: Այսպիսով, ինչպես նշել է պատասխանող Կառավարությունը, դիմումատուների փաստարկներում դրսևորվում են մի քանի անհամապատասխանություններ:

63. Դատարանն այնուհետև նշել է, որ պարզ չէր՝ արդյոք դիմումատուների բնակելի տներն ավերվել էին, թե դեռ մասամբ կամ ամբողջությամբ կանգուն էին (հիմնական վճիռ, § 146): Դիմումատուների պնդումներն անհետետողական են եղել նաև հետեյալի առնչությամբ. գործի ըստ էության քննության վերաբերյալ իրենց դիտարկումներում նրանք անհանգստություն են հայտնել, որ իրենց գույքը կարող է ավերված կամ գողացված լինել իրենց փախուստից անմիջապես հետո (§ 189). նրանք արդարացի փոխհատուցման վերաբերյալ 2012 եւ 2016 թվականների իրենց դիտարկումներում նշել են երկուսն էլ, որ ռազմական հարձակման հետեանքով իրենց գույքն այրվել է կամ խիստ վնասվել է, եւ որ իրենց բնակելի տները դեռևս կանգուն էին՝ չնայած այն բանին, որ կարող էին լքված լինել:

64. Դիմումատուները ներկայացրել են Ադրբեջանի պաշտպանության նախարարության կողմից տրամադրված եւ «Գուզլի» միջոցով ձեռք բերված օդային պատկերներ, որպեսզի ցույց տան, որ իրենց բնակելի տները դեռևս կանգուն են: Այնուամենայնիվ, պրն Ռամիզ Ջեբրայիլովը 2010 թվականի հունիսին Դատարան ներկայացված փաստարկներում նշել է, որ ինքը 2001 թվականին նկարահանված տեսանյութում տեսել է, որ իր բնակելի տունն այրված էր: Ավելին, դիմումատուների՝ արդարացի փոխհատուցման վերաբերյալ 2012 թվականի հուլիսի 9-ին ներկայացված փաստարկներով հաստատվել է, որ Գորիս-Ստեփանակերտ մայրուղին, որի կառուցումը հավանաբար ավարտին էր հասցվել 1999 թվականին, անցնում էր այն վայրով, որտեղ մի ժամանակ գտնվում էր պրն Ջեբրայիլովի երկհարկանի բնակելի տունը: Այսպիսով, պետք է եզրակացնել, որ այս բնակելի տունը 2002 թվականի ապրիլին այլևս գոյություն չի ունեցել: Ինչ վերաբերում է մյուս դիմումատուների բնակելի տների վիճակին, ապա տրամադրված պատկերները համոզիչ չեն: Նախեսառաջ, պատկերներն արվել են բավականին հեռու տարածությունից եւ ցուցադրում են շենքեր, որոնք

դժվար են նշմարվում: Երկրորդ, որեւէ ապացույց չկա, որ նշված կառույցներն իրականում այն բնակելի տներն են, որտեղ դիմումատուները մի ժամանակ բնակվել են: Երրորդ, նշված կառույցների մեծ մասը խիստ վնասված է, եւ մնացել են միայն հիմնապատերը կամ պատի մասերը: Միակ բնակելի տունը, որը կանգուն է մնացել, ենթադրաբար պրն Ակիֆ Հասանովին պատկանող բնակելի տունն է: Այնուամենայնիվ, անհնար է հասկանալ, թե ինչպիսի վիճակում է գտնվում այն եւ, ինչպես արդեն նշվել է, արդյոք այն իրականում նրա բնակելի տունն է:

65. «Հայաստանի զինված ուժերի կողմից Ադրբեջանի Հանրապետության տարածքների գրավման հետեւանքով ունեցած կորուստների եւ զոհերի գնահատման աշխատանքային խմբի» կողմից 2016 թվականի հունիսին կատարված գնահատումը, դիմումատուների ներկայացրած փաստաթղթի համաձայն, կատարվել է «ներկայացված ապացույցների, փաստաթղթերի եւ վկաների հայտարարությունների» հիման վրա: Այնուամենայնիվ, փաստաթուղթը մանրամասներ չի տրամադրում աշխատանքային խմբի կողմից ուսումնասիրված ապացույցների կամ կիրառված հաշվարկման մեթոդի վերաբերյալ: Եվ ոչ էլ հնարավոր է որոշել, թե արդյոք գնահատումը վերաբերում է այն բոլոր բնակելի շենքերին, որոնք, ըստ դիմումատուների պնդման, իրենց սեփականությունն են, թե միայն տեխնիկական անձնագրերում նշված բնակելի տներին: Պարզ չէ նաեւ՝ արդյոք յուրաքանչյուր դիմումատուի հողի եւ բնակելի տան (տների) համար նշված գումարը ներկայացնում է 1992 թվականին, 2002 թվականին, թե 2016 թվականին կամ որեւէ այլ ժամանակահատվածում դրանց արժեքը: Ավելին, հաշվի առնելով այն հանգամանքը, որ գործով ներկայացված մյուս տեղեկատվությունը ցույց է տալիս, որ երկհարկանի բնակելի տներից մեկը 2002 թվականին այլեւս գոյություն չի ունեցել, ինչպես նաեւ բավարար հիմք է տալիս ենթադրելու, որ, եթե ոչ բոլոր դիմումատուների, ապա նրանց մեծամասնության բնակելի տները խիստ վնասվել էին մինչեւ այդ տարին, աշխատանքային խմբի գնահատմանը մեծ նշանակություն չի կարող տրվել:

66. Նշված բոլոր անկանխատեսելի գործոնները հաշվի առնելով՝ գործով ներկայացված փաստարկները բավարար չեն՝ ցույց տալու, որ դիմումատուներն ունեցել են բնակելի տներ, որոնք 2002 թվականի ապրիլին դեռևս գոյություն են ունեցել, կամ գոյություն ունենալու դեպքում գտնվել են այնպիսի վիճակում, որ դրանք կարելի էր հաշվի առնել հատուցման համար շնորհում տրամադրելու հարցում: Հետևաբար, այդպիսի շնորհում չի կարող տրամադրվել:

67. Ինչ վերաբերում է դիմումատուների հողակտորներին, ապա դրանց գոյությունը հաստատվել է նույն եղանակով, ինչպես նրանց բնակելի տների գոյությունը, մասնավորապես՝ գործով ներկայացված տեխնիկական անձնագրերով (տե՛ս վերելում՝ 60-րդ պարբերությունը): Դիմումատուների՝ բացառությամբ պրն Հասանովի եւ պրն Փաշաեի, հողերի մասով հատուցման պահանջները, ինչպես բնակելի տների մասով պահանջները, պարունակել են հողակտորների նկատմամբ իրավունքի վերաբերյալ պնդումներ, որոնք չեն նկարագրվել նրանց անձնագրերում կամ չեն հիմնավորվել հատկացման վերաբերյալ որեւէ որոշմամբ կամ այլ փաստաթղթով: Այս չհիմնավորված պահանջները չեն կարող հաշվի առնվել, եւ, հետևաբար, Դատարանը կդիտարկի միայն նրանց տեխնիկական անձնագրերում նշված հողակտորները:

68. Ինչպես հաստատվել է *Լոիզիզուի* գործով (վերելում հիշատակված, § 33. տե՛ս նաեւ վերելում՝ 55-րդ պարբերությունը), Դատարանի ընդհանուր մոտեցումն է գնահատել հողին մուտք ունենալու արգելքի եւ դրանից բխող՝ հողն օգտագործելու եւ դրանից օգտվելու անհնարինության հետեւանքով կրած վնասը՝ հաշվի առնելով հնարավոր վարձակալության վճարներից ստացվող՝ ըստ գույքի շուկայական արժեքի տոկոսի չափի հաշվարկված եկամուտը: Այնուամենայնիվ, սույն գործում բավականին դժվար է որոշել դիմումատուների հողի արժեքը: Վերը նկարագրված պատճառներով, «Հայաստանի զինված ուժերի կողմից Ադրբեջանի Հանրապետության տարածքների գրավման հետեւանքով ունեցած կորուստների եւ զոհերի գնահատման աշխատանքային խմբի» կողմից կատարված գնահատմանը մեծ նշանակություն չի կարող տրվել: Արժեքի

գնահատման հարցում ուղղորդող որեւէ այլ գնահատում կամ տվյալ այս գործով հասանելի չէ: Դա մասամբ կարող է բացատրվել այն փաստով, որ այն ժամանակ, երբ հողակտորները հատկացվել են դիմումատուներին, Խորհրդային իրավական համակարգի համաձայն, հողի նկատմամբ մասնավոր սեփականության իրավունք գոյություն չի ունեցել, եւ փոխարենն այն նրանց է տրվել «օգտագործման իրավունքով» (այդ ժամանակ հողի նկատմամբ գործող իրավունքների մանրամասն նկարագրությունը տես՝ հիմնական վճռի §§ 145-148): Արժեք սահմանելու հետ կապված դժվարությունը կապված է նաեւ այն փաստի հետ, որ այն ժամանակահատվածի սկզբին, որը Դատարանը կարող է դիտարկել, դիմումատուների հողերն արդեն տասը տարի էր, ինչ գտնվում էին գրավված կամ զգալիորեն ավերված տարածքում, եւ դրանից ի վեր եւս տասնհինգ տարի է անցել նման հանգամանքներում: Այս հանգամանքներն ավելի շուտ հիմնավորում են դիմումատուների հողերին բավականին ցածր արժեք վերագրելը:

69. Հետեւաբար, թեւեւ կարող է կատարվել դիմումատուների հողերից ստացվող եկամտի, այդ թվում՝ հնարավոր վարձակալության վճարից, գյուղատնտեսությունից եւ անասնապահությունից ստացվող եկամտի կորստի հետ կապված նյութական վնասների մասով շնորհում, վնասը հաշվարկելու հետ կապված Դատարանի՝ *Լոիզիդուի* գործով որդեգրած ընդհանուր մոտեցումը սույն գործի հանգամանքների պարագայում նպատակահարմար եւ օգտակար չի համարվում:

β) Կենցաղային իրերը, մրգատու ծառերը եւ անասունները

70. Դիմումատուները նյութական վնասի հատուցում են պահանջել կենցաղային իրերի, ավտոմեքենաների, մրգատու ծառերի ու թփերի եւ անասունների կորստի մասով: Անհատների հայտարարություններից բացի՝ պահանջները հիմնավորող որեւէ ապացույց չի ներկայացվել: Եվ որ ամենակարեւորն է, պետք է ողջամտորեն ենթադրել, որ ամբողջ այս ունեցվածքն ավերվել կամ անհետացել է Լաչինի շրջանի վրա գործած ռազմական հարձակման կամ դրան հաջորդող տասը տարվա ընթացքում՝ մինչեւ

2002 թվականի ապրիլը (ինչ վերաբերում է շարժական գույքին, տե՛ս Դատարանի եզրակացությունները հիմնական վճռում՝ §§ 138 եւ 146): Եթե որեւէ իր դեռեւս գոյություն է ունեցել նշված ամսաթվին, ապա դրանք առնվազն տարիների ընթացքում քայքայման հետեւանքով այնպիսի վնաս կկրեին, որ դրանց՝ օգտագործման համար պիտանելիությունը հավանական չէր լինի: Գործով առկա չէ որեւէ տարր, որն այլ եզրակացության հանգելու հիմք կտար: Ուստի, այդ իրերի առնչությամբ, պահանջվող վնասների հատուցման եւ հիմնական վճռում արձանագրված շարունակական խախտումների միջեւ պատճառահետեւանքային կապ չկա: Հետեւաբար, այս առումով որեւէ հատուցում չի կարող շնորհվել:

γ) Աշխատավարձերի եւ այլ եկամտի կորուստը

71. Դիմումատուները նաեւ հատուցում են պահանջել նախկինում Լաչինում ստացած եկամուտների մասով՝ կա՛մ որպես ուսուցիչներ կամ ինժեներներ իրենց ստացած աշխատավարձի կորստի, կա՛մ իրենց կողմից իրականացված ձեռնարկատիրական գործունեությունից ստացված եկամտի կորստի մասով: Այս առումով Դատարանը գտնում է, որ հիմնական վճռով արձանագրված խախտումների եւ պահանջվող վնասների հատուցման միջեւ պատճառահետեւանքային կապ չկա: Դա այդպես է, որովհետեւ կորուստները վերաբերում են ոչ թե դիմումատուների գույքի եւ բնակելի տների հասանելիության բացակայությանը, այլ նրանց՝ 1992 թվականին Լաչինից տեղահանմանը: Հնարավոր չէ ենթադրել, թե դիմումատուներն ինչ աշխատանք կամ եկամուտ կարող էին ունենալ Լաչինում 2002 թվականին՝ իրենց փախուստից տասը տարի հետո: Ավելին, բացառությամբ պրն Ռամիզ Զեբրայիլովի ձեռնարկատիրական գործունեության, եկամտի կորուստը մինչեւ 2016 թվականը դիմումատուների պահանջների մաս չէր կազմում: Այսպիսով, աշխատավարձերի կամ այլ եկամուտների կորստի մասով շնորհում չի կարող տրամադրվել:

ձ) Ապրուստի ծախսերի ավելացումը

72. Մի քանի դիմումատուներ նաեւ հատուցում են պահանջել ապրուստի ծախսերի ավելացման, մասնավորապես՝ այլընտրանքային կացարանի վարձակալության համար: Դատարանը, ըստ էության, ընդունում է, որ դիմումատուները Բաքվում որոշակի լրացուցիչ ծախսեր են կրել: Պետք է կրկին ընդգծել, այնուամենայնիվ, որ այդ մասով հատուցումը կարող է վերաբերել միայն 2002 թվականի ապրիլի 26-ից հետո ընկած ժամանակահատվածին: Ավելին, որել է ճշգրիտ գումար չի կարող սահմանվել, քանի որ դիմումատուների ապրուստի ծախսերը հավաստող փաստաթղթեր, այդ թվում՝ վարձակալության պայմանագրեր կամ հաշիվ-ապրանքագրեր, չեն տրամադրվել:

բ) Եզրակացությունը նյութական վնասի մասով

73. Ամփոփելով՝ Դատարանը համարում է, որ նյութական վնասների հետ կապված շնորհում կարող է տրամադրվել միայն երկու մասով, մասնավորապես՝ դիմումատուների՝ Լաչինում գտնվող հողից ստացվող եկամտի կորստի մասով եւ Բաքվում նրանց ապրուստի ծախսերի ավելացման մասով: Այնուամենայնիվ, կրած վնասի գնահատումը կախված է մի շարք անկանխատեսելի գործոններից, մասամբ այն պատճառով, որ պահանջները հիմնականում հիմնված են սահմանափակ թվով փաստաթղթերի վրա, եւ մասամբ այն պատճառով, որ հողի արժեքը գնահատելու որել է հուսալի մեթոդ կամ տվյալ չի ներկայացվել: Հետեւաբար, դիմումատուների կրած նյութական վնասը ճշգրիտ հաշվարկման ենթակա չէ:

iii) Ոչ նյութական վնասը

74. Ինչ վերաբերում է ոչ նյութական վնասի մասով դիմումատուների պահանջներին, ապա դիմումատուների կողմից վկայակոչված՝ 1992 թվականի ռազմական հարձակման բնույթը (տե՛ս վերելում՝ 13-րդ պարբերությունը) չի կարող հաշվի առնվել, քանի որ այս գործում դա Դատարանի իրավազորությունից դուրս է: Այնուամենայնիվ, Դատարանն ընդունում է, որ գործի հանգամանքները

պետք է որ հոգեկան ապրումներ եւ տառապանք պատճառած լինեն դիմումատուներին՝ պայմանավորված երկարաձգված եւ լուծում չստացած իրավիճակով, որի արդյունքում նրանք բաժանվել են Լաչինի շրջանում գտնվող իրենց գույքից ու տներից եւ ստիպված են եղել ներքին տեղահանման ենթարկված անձանց կյանք վարել Բաքվում՝ ենթադրաբար ավելի վատ կենսապայմաններով:

75. Դատարանը համարում է, որ սույն գործով խախտում արձանագրելն ինքնին բավարար արդարացի փոխհատուցում չէ կրած ոչ նյութական վնասի դիմաց: Ինչպես նշվել է հիմնական վճռում, հարյուր հազարավոր հայ փախստականներին եւ ներքին տեղահանման ենթարկված անձանց տրամադրված աջակցությունը չի ազատում պատասխանող Կառավարությանն այն պարտավորություններից, որն այն ունի մեկ այլ խմբի, մասնավորապես՝ ադրբեջանցի տեղահանման ենթարկված անձանց նկատմամբ, ինչպիսիք դիմումատուներն են: Պարզվում է, որ մինչ այժմ Կառավարության կողմից չեն ներդրվել գույքը հետ պահանջելու մեխանիզմ կամ այլ միջոցներ, որոնցից կարող էին օգտվել դիմումատուների իրավիճակում գտնվող անձինք (տե՛ս վերելում՝ 52-րդ պարբերությունը, ինչպես նաեւ հիմնական վճռում առկա նկատառումները, §§ 199-200): Հետեւաբար, գործը տարբերվում է *Դոդանը եւ այլք ընդդեմ Թուրքիայի [Doğan and Others v. Turkey]* ((արդարացի փոխհատուցում), թիվ 8803/02 եւ մյուս 14-ը, § 61, 2006 թվականի հուլիսի 13) գործից, որի դեպքում Դատարանը համարել է, որ, հաշվի առնելով դիմումատուների եւ այլ ներքին տեղահանման ենթարկված անձանց իրավիճակը շտկելու նպատակով պատասխանող պետության իշխանությունների կողմից ձեռնարկված միջոցները՝ հիմնական վճիռն ինքնին Կոնվենցիայի 8-րդ ու 13-րդ հոդվածների եւ Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի խախտումներից բխող ցանկացած ոչ նյութական վնասի դիմաց բավարար արդարացի փոխհատուցում է:

iv) Ընդհանրի անդամների՝ հատուցում ստանալու իրավունքը

76. Դատարանը կրկին նշում է, որ ընտանիքի այն անդամները, որոնք դիմումատուի մահվանից հետո գանգատով վարույթը շարունակելու իրավունք

ունեն, կարող են նաեւ դիմումատուի տեղը զբաղեցնել արդարացի փոխհատուցման պահանջների մասով՝ եւ՛ նյութական (տե՛ս *Մալհոուսն ընդդեմ Չեխիայի Հանրապետության* [ՄՊ] [*Malhous v. the Czech Republic* [GC]], թիվ 33071/96, §§ 67-68, 2001 թվականի հուլիսի 12), եւ՛ ոչ նյութական վնասի դիմաց (տե՛ս, օրինակ, *Յեշիուսն ընդդեմ Լիտվայի* [*Ječius v. Lithuania*], թիվ 34578/97, §§ 109, ՄԻԵԴ 2000-IX. եւ *Ավջըն եւ այլք ընդդեմ Թուրքիայի* [*Avci and Others v. Turkey*], թիվ 70417/01, § 56, 2006 թվականի հունիսի 27. այնուամենայնիվ, ի տարբերություն *Մալհոուսի* գործի, § 71, որտեղ համարվել էր, որ խախտումն ազդեցություն չէր ունեցել անձամբ իրավահաջորդի վրա): Ավելին, Դատարանը ոչ նյութական վնասների մասով շնորհում է տրամադրել դիմումատուի որդուն՝ նրա կողմից շարունակվող գործով, որը վերաբերում էր կենսաթոշակ նշանակելու գործով վարույթի ոչ ողջամիտ տեսողությանը՝ ոչ միայն այն ժամանակահատվածի համար, երբ դիմումատուն կենդանի է եղել, այլեւ նրա մահվանը հաջորդող ժամանակահատվածի համար, երբ ներպետական վարույթը շարունակվել էր նրա որդու կողմից՝ որպես դիմումատուի ժառանգ (էռնեստինա Ջուլլոն ընդդեմ Իտալիայի [ՄՊ] [*Ernestina Zullo v. Italy* [GC]], թիվ 64897/01, §§ 115-116 եւ 148-149, 2006 թվականի մարտի 29):

77. Սույն գործով 6-րդ դիմումատուն՝ Քառացա Ջաբրայիլովը, մահացել է 2005 թվականի հունիսին՝ իր գանգատը Դատարան ներկայացնելուց կարճ ժամանակ անց: Գանգատով վարույթը շարունակել է նրա որդին՝ պրն Սաղաթել Ջաբրայիլովը: Այդ իսկ պատճառով, հարց է առաջանում՝ արդյոք դիմումատուի որդուն կարող է հատուցում շնորհվել սույն գործում դիտարկվող ամբողջ ժամանակահատվածի համար: Հաշվի առնելով քննարկվող խախտումների հատուկ բնույթը, մասնավորապես՝ դիմումատուի՝ Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածով եւ Կոնվենցիայի 8-րդ ու 13-րդ հոդվածներով սահմանված իրավունքների շարունակական խախտումները՝ Դատարանը համարում է, որ դիմումատուի մահվանը հաջորդող ժամանակահատվածը հատուցումը շնորհելիս հաշվի չառնելն անհարկի ձեւականություն կլիներ: Ինչպես

ցույց է տրվել վերելում, վարույթի ոչ ողջամիտ տեսողությանը եւ, հետեւաբար, շարունակականության տարր պարունակող խախտմանը վերաբերող գործում արդարացի փոխհատուցում շնորհելը պարտադիր չէ, որ սահմանափակվի մինչեւ դիմումատուի մահն ընկած ժամանակահատվածով: Դիրքորոշումը կարող է այլ լինել, եթե գանգատով վարույթը շարունակվում է ոչ թե դիմումատուի մերձավոր ազգականի, այլ նրա գույքի կառավարչի կողմից (*Սոլոմոնիդեսն ընդդեմ Թուրքիայի* (արդարացի փոխհատուցում) [*Solomonides v. Turkey* (just satisfaction)], թիվ 16161/90, §§ 42-43 եւ 47, 2010 թվականի հուլիս 27), կամ եթե հայտնաբերված խախտումը չի ազդում անձամբ դիմումատուի մերձավոր ազգականի վրա, որը շարունակում է գանգատով վարույթը (տե՛ս *Մալիհուսի* գործը՝ վերելում հիշատակված, § 71):

78. Տվյալ գործով Դատարանը նշում է, որ Ջաբրայիլովի ընտանիքն ապրել է Լաչինում, որտեղ նրանք իրենց հողում մշակաբույսեր են աճեցրել եւ զբաղվել անասնապահությամբ: Այսպիսով, նրանք ստեղծել են տնային տնտեսական միավոր: 1992 թվականի մայիսին, երբ որդին 21 տարեկան էր, ընտանիքով միասին փախուստի են դիմել: Հետեւաբար, դիմումատուի որդին եղել է նույն իրավիճակում, ինչպես դիմումատուն, եւ Լաչինում գտնվող գույքից ու բնակելի տնից օգտվելու հնարավորության կորուստը եւ այդ առնչությամբ իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների բացակայությունն ազդել են անձամբ նրա վրա: Ավելին, համարելով, որ խախտվել են եւ շարունակում են խախտվել բոլոր վեց դիմումատուների՝ Կոնվենցիայով նախատեսված իրավունքները, Դատարանը պրն Քառացա Ջաբրայիլովի դեպքում հաշվի է առել վերջինիս մահվանը հաջորդող ժամանակահատվածը (հիմնական վճիռ, § 201): Այդ եզրակացությանը հանգելով՝ այն նաեւ գտել է, որ բոլոր վեց դիմումատուները դեռեւս իրավունքներ են ունեցել իրենց հողակտորների նկատմամբ (§ 192): Հակառակն ապացուցող տեղեկությունների բացակայության պարագայում դիմումատուի որդին պետք է համարվի իր հոր գույքային իրավունքների մասով իրավահաջորդ: Հաշվի առնելով այդ բոլոր

գործոնները՝ Դատարանը գտնում է, որ պրն Սաղաթել Ջաբրայիլովին կարող է շնորհվել հատուցում՝ սույն գործով քննվող ողջ ժամանակահատվածի համար:

v) *Ընդհանուր եզրակացություն*

79. Ինչպես հետեւում է վերոնշյալ նկատառումներից, դիմումատուներն որոշակի նյութական կորուստների եւ ոչ նյութական վնասի դիմաց հատուցման իրավունք ունեն: Դատարանի կարծիքով, նյութական եւ ոչ նյութական վնասները սերտորեն կապակցված են: Կրած վնասը վերը նշված պատճառներով ենթակա չէ ճշգրիտ հաշվարկման (տե՛ս 57-րդ, 68-րդ, 72-րդ եւ 73-րդ պարբերությունները): Գնահատման ընթացքում հետագա դժվարությունները բխում են ժամանակն անցնելուց: Ինչպես ընդունվել է Դատարանի կողմից (տե՛ս վերեւում՝ 56-րդ պարբերությունը), ժամանակի գործոնը Կոնվենցիայի խախտման եւ վնասի միջեւ կապը պակաս հստակ է դարձնում: Այս նկատառումը հատկապես ակնառու է տվյալ գործում, որի դեպքում, ինչպես արդեն նշվել է, այն ժամանակահատվածը, որը գտնվում է Դատարանի *ratione temporis* իրավազրույթյան ներքո, սկսվել է տասնհինգ տարի առաջ՝ 2002 թվականի ապրիլին, այսինքն՝ ռազմական հարձակումից եւ դիմումատուների՝ 1992 թվականի մայիսի փախուստից տասը տարի անց, որոնք դիմումատուների՝ իրենց գույքից եւ բնակելի տներից շարունակվող տեղահանման հիմքում ընկած դեպքերն են: Փոխհատուցում, այնուամենայնիվ, կարող է շնորհվել՝ չնայած առկա մեծ թվով անկանխատեսելի գործոններին: Այդ պատճառներով, դիմումատուներին շնորհվող հատուցման չափը պետք է որոշվի Դատարանի հայեցողությամբ՝ հաշվի առնելով այն, թե Դատարանն ինչն արդար կհամարի:

80. Որպես եզրակացություն՝ Դատարանը հաշվի է առնում պատասխանող պետության՝ Կոնվենցիայի խախտման հետեւանքների համար հատուցում կատարելու առաջնային պարտավորությունը եւ եւս մեկ անգամ ընդգծում է երկու շահագրգիռ պետությունների՝ Լեռնային Ղարաբաղի հակամարտության ընդունելի լուծում գտնելու պատասխանատվությունը (տե՛ս վերեւում՝ 48-53-րդ պարբերությունները): Մինչեւ քաղաքական մակարդակով լուծում տրվելը՝

Դատարանը սույն գործով նպատակահարմար է համարում դիմումատուներին շնորհել նյութական եւ ոչ նյութական վնասի հատուցման ընդհանուր գումարներ: Դատարանը, իր գնահատումը կատարելով արդարության սկզբունքի հիման վրա, յուրաքանչյուր դիմումատուին շնորհում է 5 000 եվրո՝ վնասի բոլոր մասերով, գումարած այդ գումարից գանձման ենթակա ցանկացած հարկ:

Գ. Ծախսերը եւ ծախքերը

81. Դիմումատուները պահանջել են 29 910 ֆունտ ստեռլինգ փոխհատուցում իրավաբանական ծախսերի դիմաց՝ իրենց ութ փաստաբաններից երեքի կողմից Դատարանի վարույթի ժամանակ կատարված 200 ժամ տեւողությամբ աշխատանքի համար: Այնուամենայնիվ, ներկայացված ժամանակացույցներում ներառվել են 26 850 ֆունտ ստեռլինգ կազմող վճարներ՝ 179 ժամ տեւողությամբ աշխատանքի համար: Դիմումատուների մյուս հինգ պաշտպաններն իրենց խորհրդատվությունն ու աջակցությունը տրամադրել են անվճար հիմունքներով, ինչի պատճառով իրենց աշխատանքների համար վճարներ չեն պահանջվել: Դիմումատուները նաեւ պահանջել են 1 792.87 ֆունտ ստեռլինգ փոխհատուցում՝ հեռախոսային, փոստային, թարգմանչական ծառայությունների վճարների, ինչպես նաեւ լուսապատճենման եւ գրենական պիտույքների մասով կրած ծախսերի դիմաց:

82. Կառավարությունը պնդել է, որ դիմումատուների՝ ծախսերի եւ ծախքերի մասով պահանջներն էականորեն չեն առնչվել Դատարանի կողմից հայտնաբերված խախտումներին: Ավելին, որեւէ փաստաթուղթ չի ներկայացվել, որը ցույց կտար, որ նրանք իրականում եւ անհրաժեշտաբար կրել են այդ ծախսերն ու ծախքերը: Բացի այդ, պահանջված գումարները ողջամիտ չէին: Վերջինի կապակցությամբ Կառավարությունը բարձրացրել է այն հարցը, թե ինչու է պաշտպանության թիմի յուրաքանչյուր անդամի նկատմամբ կիրառվել նույն ժամավճարի չափը (150 ֆունտ ստեռլինգ) այն դեպքում, երբ նրանցից

երկուսի կողմից կատարված որոշ առաջադրանքներ փաստաբանի օգնականի աշխատանքի բնույթ են կրել:

83. Դատարանը կրկին նշում է, որ, Կոնվենցիայի 41-րդ հոդվածի հիման վրա փոխհատուցում կարող է կատարվել միայն այն իրավաբանական ծախսերի եւ ծախքերի մասով, որոնք դիմումատուներն անհրաժեշտաբար եւ իրականում կրել են: Այս առնչությամբ, Դատարանը նշում է, որ տվյալ գործով վարույթը տեւել է ավելի քան տասը տարի եւ ներառել է երկու դռնբաց լսում: Գործով բարձրացվել են փաստերին եւ իրավունքին առնչվող բարդ հարցեր, իսկ փաստարկները եղել են բավականին ծավալուն: Հետեւաբար, Դատարանը գտնում է, որ դիմումատուները ծախսերն ու ծախքերը անհրաժեշտաբար եւ իրականում կրել են: Բացի այդ, հաշվի առնելով, որ մի քանի պաշտպաններ իրենց աշխատանքի համար վարձատրություն չեն պահանջել՝ գումարները, այդ թվում՝ կիրառված ժամավճարի չափը պետք է ողջամիտ համարել: Այնուամենայնիվ, ներկայացված ժամանակացույցներում դասակարգված աշխատանքը հասնում է միայն 179 ժամի՝ իրավաբանական ծախսերի մասով ընդհանուր կազմելով 26 850 ֆունտ ստեռլինգ: Դատարանը շնորհում է այս գումարը ծախքերի մասով պահանջված գումարների հետ մեկտեղ, այսպիսով ընդամենը 28 642.87 ֆունտ ստեռլինգ՝ ծախսերի եւ ծախքերի մասով:

Դ. Չկատարման դեպքում հաշվարկվող տոկոսադրույքը

84. Դատարանը գտնում է, որ չկատարման դեպքում հաշվարկվող տոկոսադրույքը պետք է հիմնված լինի Եվրոպական կենտրոնական բանկի սահմանած՝ լոմբարդային ռեպոյի տոկոսադրույքի վրա, որին պետք է գումարվի երեք տոկոսային կետ:

ԱՅՍ ՀԻՄՆԱՎՈՐՄԱՄԲ ԴԱՏԱՐԱՆԸ ՄԻԱԶԱՅՆ՝

1. Վճռում է, որ

ա) պատասխանող պետությունը երեք ամսվա ընթացքում պետք է պարոններ Էլխան Չիրագովին, Ադիշիրին Չիրագովին, Ռամիզ Զեբրայիլովին, Ակիֆ Հասանովին, Ֆելսրեդին Փաշաեին եւ Սաղաթել Զաբրայիլովին վճարի հետեյալ գումարները՝

i) ոչ նյութական եւ նյութական վնասի դիմաց՝ 5 000 եվրո (հինգ հազար եվրո) նրանցից յուրաքանչյուրին՝ գումարած գանձման ենթակա ցանկացած հարկ.

ii) ծախսերի եւ ծախքերի դիմաց՝ 28 642.87 ֆունտ ստեռլինգ (քսանութ հազար վեց հարյուր քառասուներկու ֆունտ ստեռլինգ եւ ութսունյոթ պենս)՝ գումարած նրանցից գանձման ենթակա ցանկացած հարկ.

բ) վերը նշված եռամսյա ժամկետի ավարտից հետո՝ մինչեւ վճարման օրը, պետք է հաշվարկվի վերոնշյալ գումարների նկատմամբ պարզ տոկոսադրույք՝ չկատարման ժամանակահատվածում Եվրոպական կենտրոնական բանկի սահմանած՝ լոմբարդային ռեպոյի տոկոսադրույքի չափով՝ գումարած երեք տոկոսային կետ.

2. Մերժում է արդարացի փոխհատուցման պահանջի մնացած մասը:

Կատարված է անգլերենով ու ֆրանսերենով եւ գրավոր ծանուցվել է 2017 թվականի դեկտեմբերի 12-ին՝ համաձայն Դատարանի կանոնակարգի 77-րդ կանոնի 2-րդ եւ 3-րդ կետերի:

Յոհան Բոլլուերթ

Գուլիդո Ռայմոնդի

Քարտուղարի տեղակալ

Նախագահ